№ 133 ՈՒՐԲԱԹ 20 ՅՈՒՆԻՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 20 ՅՈՒՆԻՍԻ № 133

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են տարեկան բաժանորդավճարի կէս մասը, ուղարկել նաև երկրորդ մասնավճար 5 բուբլին, որպէսզի թերթի առաքման գործում յուլիսի 1-ից ընդհատում տեղի չունենայ:

Տարեկան բաժանորդավճարը լրացնողները կը ստանան նաև խոստացված ՊՐԷՄԻԱՆ:

Հայաբնակ Սպասողական Ընկերութեան անդամները հրաւիրվում են երկրորդ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,
որը կայանալու է կիրակի, յունիսի 22-ին, առաւօտեան ժամը 11-ին Հայաբնակ Հասարակական Ազգային Ակումբում:
Օրակարգի խնդիրն է՝ յունիսի 15-ին կայացած առաջին ընդհանուր ժողովի շարունակութիւնը:
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(Կ.) առ. 626. 2—1

ՑԻՐԿ
Փ. ԻՊԱՏՕՎԻ
Այսօր, ուրբաթ, յունիսի 20-ին, շքեղ ներկայացում բաղկացած 3 բաժանմունքից, մասնակցութիւնը ամբողջ խումբ: Այսօր տեղի կունենայ պ. պ. Բօգէտտիների ԲԻՆԵՖԻՏԻՍԸ: Բենեֆիցիանտները այսօր կը զբաղուին, կը նուագեն, կերգեն ու հանաքներ կանեն օրվայ դէպքերի շուրջը: Բոգէտտիները՝ առաջին անգամ Թիֆլիսում՝ հանդէս կը գան «Երկու խուլիգանի» և «Թիֆլիսի Բազար» կոմիկական տեսարաններում: Նը նուագեն գեղեցիկ օպերաներից և օպերետներից պօպուրիներ՝ ամեն տեսակ գործիքների վրա: Ցեղի կունենան ամերիկան գեղեցիկ նորոյթներ, օրվայ չարիների շուրջը գրոյցներ: Կոմիկական օրիգինալ տեսարաններ, ուր կը մասնակցեն բոլոր արվեստները, արախտուհիները և ձիերը: Նուագածութիւն դաշնամուրի վրա ոտներով: Կարգադրչ ինքնութիւն դաշնամուրի վրա: Գարգարեանի ֆիշեները: Բազմաթիւ և բոլորովին նոր նոր նոր նոր: Վերջում կը տրվի սենսացիոն պանտոմիմա՝ «Ճանաչի գատավարութիւնը»: Գիշեր սովորական են: Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին:
625. 1—1

ԴՕԿՏՕՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ասիստենտ Բերլինի համալսարանի Charité հիւանդանոցի
Շարունակում է ընդունել Գերմանիա դիմող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ:
Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 a. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) առ. 391. 100—22

ԲԺԻՇԿ
Տուլանիկ Նաբարեան
Կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան մասնագէտ, տեղափոխվելով հանքային ջրերը՝ Պատիգորսկում և Էլիզաւետկում մայիսի սկզբից ընդունում է հիւանդներ:
Հասցէն՝ Пятигорскъ, за соборомъ, Елизаветинская ул. առ. (Ի.Հ.Կ.) д. Архипова. 458. 25—19

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
17—18 յունիսի

ՊԱՐԻԶ.— Առաջին յօդուածներից յետոյ, որոնցով ցաւակցութիւն յայտնեց Հաբսբուրգեան տանը Սարաէվոյի ոճիրի առիթով, մամուլը մանրամասն մեկնում է Աւստրիայի դէպքերը: Լրագիրները արձանագրում են բռնի գրաւման ու ճնշումների քաղաքականութեան հետևանքները և կարծում են, որ սերբ ազգաբնակութիւնը կարող էր մարտահրաւէր ընդունել արքիդքսի՝ զօրախաղերին գալը: Մամուլը յոյս է յայտնում, որ ոչ սլաւոնների ճնշելը, ոչ էլ պատասխան մահափորձերը ընդունակ են լուծելու Աւստրիայի ժողովուրդների հարցը: Մամուլի օրգաններից շատերը ցաւակցելով մատնանշում են, որ Սարաէվոյի դէպքը ծանր հարուած հասցրեց սլաւոնականութեան և հաւանօրէն կը մերձեցնէ Աւստրիան Իտալիային: Պիշոնի օրգան «Petit Journal»-ը բողոքում է, որ պատապարտվում է ամբողջ սերբ ժողովուրդը մահափորձի մէջ, որ ֆանատիկների գործն էր:

ՎԻԵՆՆԱ.—Տեղիս և Բուդապեշտի լրագիրները շարունակում են մեղադրել սերբերին մահափորձի մէջ: «Ցէյտը» հրաւիրում է Սերբիային՝ հրատարակել օրէնք անիշխանականների դէմ և աւստրիական ոստիկանութեան հետ յարաբերութեան մտնել իր լոյսաւորութիւնը վաւերագրերով հաստատելու համար: Հանդուցեալ արքիդքսի օրգան «Բէյխա-Պօստը» չափազանց գրգռված տոնով կոսկած է յայտնում պաշտօնական Սերբիայի դէմ, խորհուրդ է տալիս մերժել սերբական ցաւակցութեան արտայայտութիւնները և ոչնչացնել վերջապէս օձի բունը: Լրագիրները տեղեկացնում են, որ Սարաէվոյում տեղի է ունեցել սերբական ոսկալի ջարդ, որ լայն չափեր է ընդունել ոստիկանութեան սառնասիրտ վերաբերմունքի շնորհիւ:

«Վիեննա-Ցայտ.» հաղորդում է, որ կայսրը հրամայեց վեց շաբաթով պալատական սուգ նշանակել:

Կայսրի, արքիդքս Կարլի և աւագ-հօֆմէյստէր Մոնտէնուովոյի ներկայութեամբ բացվեց արքիդքս Ֆրանց-Ֆէրդինանդի կտակը: Ամբողջ անշարժ ու շարժական կայքը կտակված է զաւակներին: Դքսուհի Հոհենբէրգին կտակով իրաւունք է տրվում օգտվել կարողութեան եկամուտներից:

Ուսանողների մի խումբ փորձեց ցոյց կազմել սերբական մխսիայի առաջ: Ոստիկանութիւնը արգելք եղաւ: 200 ուսանող ժողովվեցին արձարանները մխսիայի մօտերում և կամենում էին ազդանշանով անցնել մխսիայի շէնութեան առաջով: Ցուցարարները երգում էին օրհներգը և աղաղակում էին «Կորչի Սերբիան»: Ոստիկանութիւնը ցրեց ցուցարարներին:

Գերմանական կայսերական զոյգը դիմեց սպանված արքիդքսի աւագ դստերը հետաւեալ հեռագրով. «Մենք հաւիւ խօսքեր ենք գտնում՝ արտայայտելու ձեզ և զաւակներին՝ թէ ինչպիսի վշտով են պատված մեր սրտերը, ձեր անլուր դժբաղդութիւնը յիշելով: Ընդամենը 14 օր առաջ մենք գեղեցիկ ժամեր անցրինք ձեր ծնողների հետ և այժմ ստիպված խմանում ենք, որ ձեզ պատահվել է սոսկալի վիշտ: Թող Ամենակալը օգնէ ձեզ և այժմ պարգևէ հարուածին դիմանալու: Ծնողների օրհնութիւնը անպակաս կը լինի ձեր վրայից»:

«Կօր. Բիւրօն» կտրականապէս հերքում է այն չարամիտ լուրերը, թէ իբր կայսրը երէկվայ ընդունելութեանը ողորմածաբար չը վերաբերեց Ֆինանսների մինիստր Բիլինսկիին:

Արքիդքսուհի Մարիա Թէրէզան և Մարիա Անունցիատան մեկնեցին Ալուտէց, հանդուցեալ գահաժառանգ զոյգի գաւակների մօտ՝ նրանց Վիեննա բերելու համար:

«Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէին» հաղորդում են Սարաէվից. «Արքիդքսի շքախմբի վերադարձած անձինք պատմում են, որ գահաժառանգի կեանքի դէմ նախածծված էին մի շարք մահափորձեր, եթէ արքիդքսը ապահով վերադառնար քաղաքային տունը: Այն սեղանի տակ, որի վրա նախաճաշ էր պատրաստված արքիդքսի համար, դրված էին երկու ռումբ ժամացոյցի մեխանիզմով: Երրորդ ռումբը գտնվեց ծխելու սենեակում և 7 ռումբ էլ երևան հանվեց մի կալանաւորված կնոջ մօտ»:

ՊՐԱԳԱ.—Զեխ լրագիրները, պարսաւելով մահափորձը, զսպված դարձուածքներով խօսում են յանցանքի պատճառների մասին: Բոլոր լրագիրները վկայում են, որ հանդուցեալը սիրում էր զեխ ժողովրդին:

ԶԱԳՐԷԲ.—Սերբերի դէմ բոլոր ցոյցերը կազմակերպել է Ֆրանկի կուսակցութիւնը. մնացած խօրվատական կուսակցութիւնները ցաւ են յայտնում հանդէպ այդ ցոյցերի:

ՍԱՐԱԷՎՕ.—Երէկվայ ցոյցի ժամանակ ջարդվեցին միտրօպոլիտի պալատի պատուհանները: Սերբ միտրօպոլիտ Լէտիցան, որ կանգնած էր փակված փեղկերի ետևում, թեթև վիրաւորվեց ապակու կտորներից ձախ ձեռքից: Երէկ և առաջի օրը կատարվել են բազմաթիւ ձերբակալութիւններ: Մահմեդական օրգան «Բակօն» մեծ վիշտ է յայտնում և ոճիրը անուանում է խայտառակութիւն Սարաէվի և նրա ազգաբնակութեան համար:

Սարաէվոյում և Մոստարում նորից բռնկվեցին հակասերբական ցոյցեր: Մի քանի սերբական տների պատուհանները ջարդված են: Նման ցոյցերի մասին տեղեկացնում են և ուրիշ քաղաքներից: Խօրվատ քաղաքական գործիչների մեծ մասը դէմ է սերբերի վրա բռնութիւններ գործելուն:

Իրազեկ շրջանները նկատում են, որ երէկվայ հակասերբական ցոյցերը հետևանք էին կաթոլիկ և մահմեդական ազգաբնակութեան մեծամասնութեան չափազանց յուզված դրութեան: Ցոյցերին մասնակցում էին ազգաբնակութեան բոլոր խաւերը, մինչև անգամ բարձր հասարակութեան տիկնայք: Բնորոշ է այն, որ ցոյցերի ժամանակ սերբերից սպանվողներ չեղան, մինչդեռ սերբերի ձեռքով սպանվեցին մի կաթոլիկ և մի մահմեդական: Կողոպուտներ կատարեց միայն խուժանը:

Կեանքը ընթանում է նորմալ: Հարաբերական բոլոր կրպակները և խանութները բաց են: Կօնցերտում տեղի են ունեցել հայրենասիրական ցոյցեր: Կաթոլիկ մահմեդականները կազմեցին հակասերբական ցոյցեր, բայց ցրվեցին ոստիկանութիւնից: Հաղորդում են, որ մի շարք քաղաքներում տեղի են ունեցել հակասերբական ցոյցեր:

Ի նկատի ունենալով, որ անկարգութիւնները չեն դադարում, շրջանի կառավարիչը ամբողջ Բոսնիան յայտարարեց զինուորական դրութեան մէջ:

ԶԱԳՐԷԲ.—Բուգոյնօում անկարգութիւնները վերսկսվեցին: Ցուցարարները փշրում են սերբերի տների պատուհանների ապակիները: Կնկնում նոյնպէս խաղաղ հակասերբական ցոյցեր են:

ԼՕՆԴՕՆ.—Համայնքների պալատը միաձայն ընդունեց ուղերձ՝ յանուն թագաւորի, որի մէջ յուզմունք ու վիշտ է յայտնված արքիդքսի սպանութեան առիթով:

ԲԵԼԳՐԱԴ.—Սերբական «Պրես-Բիւրօն» հրատարակել է թէ՝ Սերբիան, բոլոր քաղաքակրթված տէրութիւնների նման, զայրոյթ է արտայայտում ոճիրի և նրա մեղսակիցների դէմ: Սերբիան վերջերս ամեն ինչ արաւ, որպէսզի բարելաւէ իր յարաբերութիւնները Աւստրիայի հետ: Մի պատասխանատու խելառ քայլի համար գերմանական մամուլը անարգար կերպով է մեղադրում ամբողջ Սերբիային:

ՋԱՌ.—Երէկ երեկոյեան ռուսաց դեսպան Գիրսը այցելեց Բաքուլի կառավարչապետին և յայտնեց ցաւակցութիւն:

ԶԱԳՐԷԲ.— Ցոյցերը վերսկսվեցին: Երեկոյեան ամբոխը կայսրի պատկերով անցաւ փոխոցներով, անելով բացագանչութիւններ Սերբիայի և Պիսոր արքայի դէմ: «Նեցիօնալ» սրճարանում այցելուների և ցուցարարների ընդհարման ժամանակ վիրաւորվեցին 2 հոգի, սրճարանի կահաւորութեան մի մասը ջարդվեց: Ցուցարարները քարերի տարափ տեղացին պատուհանների վրա: Ոստիկանութիւնը ցրեց ցուցարարներին:

ԲԵԼԳՐԱԴ.—Մամուլը միաբերան յայտնում է, որ սերբական մահափորձը թողեց խոր տպաւորութիւն և դատապարտվում է երբև պատանու խելառութիւն: Սերբիան ոչ մի առնչութիւն չունի արիւնալի անցքի հետ:

Պիսոր արքան և գահաժառանգ Ալէքսանդրը ցաւակցութիւն արտայայտեցին Ֆրանց-Յովսէփ կայսրին:

ԿԱՀԻՐԷ.—Եգիպտական խեդիվը ցաւակցական հեռագիր ուղարկեց Ֆրանց-Յովսէփ կայսրին:

ՅԷՏԻՆԻԷ.—Նիկոլայ թագաւորը անձամբ այցելեց աւստրօ-ունգարական միսիան և ցաւակցութիւն յայտնեց արքիդքս Ֆրանց Ֆէրդինանդի մահվան առիթով:

ՍԱՐԱԷՎՕ.—Մօգաւում և Տուէլում տեղի ունեցան մեծ ցոյցեր և ընդհարումներ: Տուէլում ցուցարարներին միացաւ ամբոխը, բաղկացած բացառապէս ցիգաններից, և յամառ ընդդիմութիւն էր ցոյց տալիս կարգը պահպանող պահակախմբին: Մի այն զօրքի երևալուց յետոյ կարելի եղաւ կարգը վերականգնել և ամբոխին ցրել: Կատարվեցին բազմաթիւ ձերբակալութիւններ: Նոր անկարգութիւնների առաջն առնելու համար զինուորական դրութիւն է յայտարարված:

Հարցաքննութեան հետևանքները առայժմ գաղտնի են պահում:

Քննիչ իշխանութեանը յաջողվեց պարզել, որ Ցաբրինովիչը և Պրինցիպը Բէլգրադում կաշառված են եղել կօմիտաչի Միլոս Ցիգանովիչի կողմից, որը նրանց զինել էր ռումբերով և ատրճանակներով: Պրինցիպ յայտնեց, որ սկզբում մտադիր էր սպանութիւնը կատարել Տաբչինում, զօրախաղերի հրամանատարի ընակարանում, բայց հրաժարվեց այդ մտքից, ի նկատի ունենալով այն արտակարգ նախազգուշական միջոցները, որոնք ձեռք էին առված զինուորական իշխանութեան կողմից: Ինչ վերաբերում է բազմաթիւ կալանաւորվածներին, առայժմ աշխատվեց իմանալ, որ նրանք ծանօթ են Ցաբրինովիչի և Պրինցիպի հետ:

Մասնաւոր նախաձեռնութեամբ հանգանակութիւն է բացված արքիդքսի սպանութեան տեղում արձան կանգնեցնելու համար. առաջին ստորագրութիւնը տուել է 2000 կռոն:

Ընդհանուր իրանցման ժամանակ Սարաէվոյում աւերվել են սերբական մօտ հազար խանութներ ու տներ: Սերբական միտրոպոլիտի ընակարանի ապակիները ջարդվեցին քարերով: Վնասների ընդհանուր գումարը հասնում է մօտ մի միլիոն կռոնի: Քանդվեցին սերբական որբերի ապաստարանը և դպրոցները: Մօստարայից, Դուբրովկայից և ուրիշ քաղաքներից տեղեկութիւններ են ստացվում հակասերբական ցոյցերի մասին:

ԶԱԳՐԷԲ.—Ֆրանկի խօրվատական կուսակցութեան հետևողները մեծ ցոյց կազմեցին սերբերի դէմ: Ձայներ էին լսվում. «Կորչին սերբերը», «Կորչի՛ Պիսոր թագաւորը», «Կրիժառու լինենք խօրվատական գահաժառանգի մահվան համար»: Ամբոխը ջարդեց սերբական ազգային սրճարանը: Ոստիկանութիւնը զէնքի դիմեց: Կան շատ վիրաւորներ: Ցուցարարները փշրեցին քաղաքապետի տան և տեղական սերբական թերթի խմբագրատան ապակիները: Իլիցում ամբոխը քանդեց խօրվատական սէյմի նախագահ և սերբական կուսակցութեան ղեկավար Մեդկովիչի տունը: Ցոյցը շարունակվեց մինչև առաւօտ:

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
18 յունիսի

ՎԻԵՆՆԱ.—«Կօր.-Բիւրօյին» հեռագրում են Դուրացցօյից. «Եկան կամաւորներ Պրէնկ-Բիբ-Դոդի զօրախմբից: Նրանց ասելով, զօրախմբում 2000 մարդուց մնացել են մի քանի հարիւր հոգի, մնացածները կողոպուտների են ձեռնարկել: Անսպասելի կերպով ապստամբները յարձակվեցին զօրախմբի երկու մասի վրա: Պրէնկ-Բիբ-Դոդի հրամանով զօրախումբը նահանջեց Իշմի կողմը: Պրէնկ-Բիբ-Դոդի այդ քայլ վերագրում են օտար ազդեցութեան: Իշմում Պրէնկ-Բիբ-Դոդան, օգտվելով երևելիների մէջև եղած տարաձայնութիւններից, կարգադրեց ետ դառնալ, մտադրութիւն ունենալով զէնք վերցնել, բայց կամաւորները հակառակեցին այդ բանին: Գիշերը սկսվեց նահանջ Իշմից: Զէնքերը բերված են Դուրացցօ: Երևելիներ Դուրացցոյում առաջապահ դիրքերից լսվեցին առանձին հրացանաձգութիւններ: Ալբանիայի կառավարիչը անգլիական զինուորական հիւանդանոցում գտնվող վիրաւորներին շքանշաններ պարգևեց նրանց քաջութեան համար:

ԴՈՒՐԱՑՑՕ.—Եկաւ Իզմայիլ Բէմալը իր համախոհների հետ:

Պաշտօնապէս յայտարարվում է, որ Պրէնկ-Բիբ-Դոդան շտապով նահանջում է դէպի Սկիւտար. նրա բանակում ստացվել են զէնք ու ռազմամթերք և շքադրամներ են տրվել վիրաւորներին:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
18 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Պահնորդական բաժանմունքի պաշտօնեաները խուզարկութիւն կատարեցին կրթութեան Սամպսոնիէվեան Ընկերութեան մէջ: Խլեցին փաստաթղթեր ու կալանաւորվեցին 100 հոգի, որոնցից ազատ թողին 33 հոգուն:

ՄՕՍԿՎԱ.—Անգլիացի հիւրերը նայեցին Տրետեակովի պատկերասրահը, Մէջնաբերդը, ացելեցին Ռումանովների տունը, մնայնագործական թանգարանը:

ՍՄՈԼԵՆՍԿ.— Թեմական համագումարը միջնորդութիւն յարուցեց, որպէսզի արբեցողութեան դէմ մաքառելու նպատակով կիրակի և տօն օրերը փակ լինեն բոլոր արքունի ու մասնաւոր խմիչքավաճառանոցները:

ԿԻԵՎ.—Օդապնացութեան ընկերութիւնը Սիկորսկիին մատուցեց մեծ ոսկեայ շքադրամ մակագրութեամբ:

ՄԻՆՍԿ.—Լողանալիս խեղդվեցին 8—15 տարեկան 5 երեխայ:

ՄԻՆՍԿ.—Շոգ եղանակը արգելք է լինում հացահատիկի և փետանխոտի ահմանը: Խոտը մարգագետիններում այրվում է: Երաշտը սպառնում է այգիներին: Հրդեհները սաստկացել են: Վերջին ամսում 14 գիւղում այրվեցին 400 խրճիթ: Վնասները կէս միլիոնից աւելի են: Ազգաբնակութիւնը աղօթում է, անձրև խնդրելով երկնքից:

ՎԵՍՏԿԱ.—Մայմժի գաւառում Սարաիկ գիւղը այրվելիս կրակին զոհվեցին 400 գլուխ անասուն. հրդեհը լափեց 300 տուն:

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ.—Անտառները այրվում են:

Կ. ՊՕԼԻՍ.—Ցոյն պատգամաւորները հարցապնդում ներկայացրին ներքին գործերի մինիստրին թիւրքական երկիրներից յոյների արտագաղթի և դրա առաջն առնելու միջոցների մասին: Թալէաթ-բէյը բացատրութիւն կը տայ շաբաթ օրը: Կովկասից Սալոնիկ գաղթած յոյն ընտանիքները մեկնել են Պիրէյ, որովհետև յոյն կառավարութիւնը արգելեց էմիգրանտներին ափ իջնել Սալոնիկում, Խիոսում և Միտիլէնում, ուր հաւաքաւոր էմիգրանտներ կարօտ վիճակի մէջ են:

ԹԷՀԵՐԱՆ.—Անգլիական սինդիկատի բանակցութիւնները պարսից կառավարութեան հետ՝ Քիրմանի պղինձը մշակելու կոնցէսիա տալու մասին, մօտենում են իրանց վախճանին յօգուտ անգլիացիների: Կոնցէսիան ստորագրելիս սինդիկատը տալիս է աւելս 100,000 ֆունտ:

ԿԱՀԻՐԷ.—Որովհետև համաձայնութիւն չը կայացաւ Իտալիայի և շէյխ Սէնուսիի միջև, նրա եղբայրը Սաիդ-Խիլալ-Սէնուսին զօրքի գլուխ անցած դիմում է դէպի եգիպտական սահմանը ռազմամթերք և դրամ ձեռք բերելու՝ Իտալիայի դէմ պատերազմը շարունակելու համար:

ԿԱՀԻՐԷ.—Եաֆֆայում տարածված ժանտախտի պատճառով, Եգիպտոս ստացվող ապրանքները ենթարկվում են կարանտինի:

ԼՕՆԴՕՆ.—Գիշերս երեք հարեւան խանութներում հրդեհ սկսվեց. խանութների ներսի իրերը համարեա ոչնչացան. վնասները խոշոր են: Քաղաքի միենոյն մասում մի քանի հրդեհներ տեղի ունեցան: Կասկած կայ, որ հրդեհը սուիքրաժիսուհիների գործն է:

ԲԷԼՖԱՍՏ.—Ուլստերի զօրաբանակի կամաւորներին հրամայված է ազատօրէն կրել զէնք ու դիմադրութիւն ցոյց տալ, եթէ հրամայեն օթիցէրները:

ԹՈՒՐԻՆ.—Իտալական գլխաւոր շտաբի պետ գենեռալ Պոլիսն փորձնական հրացանաձգութեան ժամանակ՝ Սիրէի շրջակայքում՝ յանկարծամահ եղաւ:

ՊԱՐԻԶ.—Բժ. Վլորնովը յայտնեց բը-ժշկական ճեմարանին, որ կապիտ վահանաձև գեղձը անհօրմալ երեխային պատուաստելուց յետոյ, վերջինիս հասակը աւելանում է և միտքը զարգանում է:

ՊԱՐԻԶ.—Զինուորական գործերի մանտժողովը նախագահ ընտրեց Ինէդուային: Դէլկասէն վերցրեց իր թեկնածութիւնը:

ԳՐՕՆԻՆԳԷՆ.—Վիլհէլմինա թագուհու և ամուսնու ներկայութեամբ հանդէսով տօնվեց համալսարանի 300-ամեակը: Համալսարանը մատուցեց թագուհուն Նիդերլանդական գրականութեան դոկտորի կոչում:

ՄԱԴՐԻԴ.—Մի խումբ կանայք շուկայում ցոյց արին, պահանջելով իջեցնել գետնախնձորի գները: Ցուցարարները գետնախնձորը ցիրուցան արին տապրակներից: Հաղիւ հնար եղաւ վիրականգնել կարգուկանոնը: Կան շատ վիրաւորներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ՈՑԾԵՐԸ «ՆՈՐ-ՈՑԾԻ» ԷՋԵՐՈՒՄ

IV

Եւ այսօր, երբ նորից կոչ է արվում կովկասահայ աշխատաւոր ժողովրդին ակտիվ մասնակցութիւն ունենալ թիւրքահայ կրօնի գործերում մէկ կողմից, իսկ միւս կողմից իրանց յայտարարում են, ըստ երևոյթին, բանաւորական շահերի պաշտպան, մեզ համար աւելի քան պարզ պէտք է լինի այն, որ դա կարապի երգի վերջին ճիգն է մէկ կողմից, իսկ միւս կողմից մենք ուզենք մի պատմական շրջան այդ կոչ անողների կեանքից, որ նրանք անկարող են եղել կատարել այն միսսիան, որը իրանց վրա են վերցրել տարիներից ի վեր. և դա առաջ է եկել շնորհիւ այն հանգամանքի, որ նրանք զուրկ են եղել քաղաքական կենսունակութիւնից և յեղափոխական—լայն իմաստով—ընդունակութիւնից, ժողովրդական մասսաներին դաստիարակելու առաքելոյ. և դա առաջ է եկել նրանից, որ Կովկասի քաղաքների կաբինեթներից է հրահանգվել ամեն բան, և, որ գլխաւորն է, հրահանգողները տարբերան հասկացողութիւն-ծանօթութիւն չեն ունեցել երկրի ներսում կատարվող իրական այն պայմանների հետ, որ տարվում է թիւրքահայ ազատագրման գործը պէտք է լինի՝ թիւրքահայ ժողովրդի ձեռքով. և որքան թիւրքահայոց գործերի վարելը ստանձնեն դրսեցիները—կամ այն քաղաքական կուսակցութիւնը, որը իրան է վերապահված համարում թիւրքահայ ազատագրման գործը—և նա տարվի այն շաւղով, ինչպէս անցեալում կաբինետների հրահանգներով, առանց անմիջական կապ ունենալու բուն ժողովրդի հետ, ապա երկրի ներսը, մեր համոզմունքով, նոյն ջուրը և նոյն ջրաղացը կը լինի։ Իսկ այժմ, որ մենք կանգնած ենք թիւրքահայ հարցի հանդէպ, դիւանագիտական խաղերի շնորհիւ՝ Թիւրքահայաստանը դառնում է երկրորդ Մակեդոնիա, և դա ակնյայտնի է։

Մեզ մնում է ասել, որ որքան շուտ ազատագրվի թիւրքահայը, այնքան շուտ կազատագրվի կովկասահայ աշխատաւոր ժողովուրդը մանր բուրժուական նացիոնալիստական կուսակցութեան—զանազան անուանտակ—շահագործումից յանուն թիւրքահայերի մէկ կողմից, իսկ միւս կողմից նա կազատվի տիրացուական ծեսականների հովանաւորութիւնից և, դասակարգային գիտակցութեան գալով, առաջ կը տանէ իր միսսիան։

«Նոր Ոյժի» չորս համարները համբերութեամբ թերթելով, եկանք այն եզրակացութեան, որ այդ թերթը իր բովանդակութեամբ ու ներքին իմաստով՝ նոյն հին ոյժերի մանր բուրժուական նացիոնալիստական տենդենցն է արծարծում, միայն թէ այժմ նոր ձևի մէջ, բայց էութիւնը ի հարկէ նոյնն է. յայտարարելով իրանց բանւորի շահերի պաշտպան, մենք դրա տակ տեսնում ենք ու հասկանում այն, որ նրանք ցանկանում են կովկասահայ պրօլետարիատի դասակարգային գիտակցութիւնը մթագնել և էլի իրանց հին երգն են երգում. թիւրքահայ ժողովրդի ազատագրման գործը կովկասահայ աշխատաւոր ժողովրդի ձեռքով. և մենք հնարաւորութեան սահմաններում ցոյց տուինք, որ դա սխալ է. թիւրքահայ ժողովրդի ազատագրումը կարող է լինել իր՝ թիւրքահայ ժողովրդի ձեռքով, եթէ որևէ ազատութիւն հնարաւոր է, այն իմաստով, ինչ իմաստով նրանք ցանկանում են։

Մեզ համար կարևոր է ցոյց տալ, որ «Նոր Ոյժը» բանւորական օրգան չէ և թէ նա այդպիսին լինել չէ կարող իր բռնած ուղղութեամբ։ Մենք ցոյց տուինք այն ակնյայտնի անհեթեթութիւնները, որոնք գրվել են այդ թերթի էջերում—մէկ կողմից բանւորութիւն, միւս կողմից թիւրքահայ ժողովուրդ, որոնք հակադիր բևեռներ են, և կապել դրանց իրար հետ՝ կը նշանակէ խաբել երկուսին էլ կամ թէ մէկին ծառայեցնել միւսի շահերին. այլ կերպ լինել չէ կարող. կովկասահայ պրօլետարիատին զգուշացնում ենք, որ այդ թերթը ոչ մի առնչութիւն չունի պրօլետարիատի պատմական առաքելութեան հետ. նա մանր բուրժուական նացիոնալիստների օրգան է։

Ս. Բօզդանօվիչ

Ե. Գ.—Մեր յօդուածի առաջին մասում («Մշակ» № 130) սպրդել է մի-երկու սխալ. թերթի 2-դ էջի երրորդ սիւնակի 5-դ պարբերութեան մէջ յիշված է, թէ բանւորների համար հիմնվել է 4000 հատ հիւանդութեան դրամարկղ. պէտք է լինի՝ հիմնվելու է։ Նոյնպէս՝ նոյն պարբերութեան մէջ ասված է, թէ բացվել են 3402 դրամարկղ, պէտք է լինի՝ բացվելու են։

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ. ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Վերջին ժամանակներս Աստրախանի թեմական դպրոցը ոչտեղ բանալու հարցը մի տեսակ կուռածաղիկ է դարձել։ Աստրախանցիք թեմ. դպրոցը անպատճառ ուզում են Աստրախանում բանալ, իսկ թեմը՝ Արմաւիրում։

«Մշակը» կողմնակից է, որ թեմ. դպրոցը բացվի Աստրախանում, որպէս առաջնորդանիստ քաղաքում. բայց թեմի ամբողջ հայ հասարակութիւնը, բոլոր յարմարութիւնները աչքի առաջ ունենալով, ցանկութիւն է յայտնում, որ թեմ. դպրոցը բացվի Արմաւիրում։

Աստրախանցիք, իրանց առաջին կազմած ընդհ. ծխ. ժողովում որոշում են թեմական դպրոցը բանալ Աստրախանում և այդ ժողովում խօսում են, որ թեմ. առաջնորդը, առանց աստրախանցիների գիտութեան և ծխ. ժողովի որոշման, իր բացատրութեամբ զեկուցում է տուել ի նպաստ Արմաւիրի՝ պատճառաբանված փաստերով, մատնանշելով այն բոլոր յարմարութիւնները, որոնց մասին ներկայումս թեմի ընդհ. հասարակութիւնն է ասում ու գրում։ Այդ հիման վրա աստրախանցիք շտապով ժողով են կազմում, որպէսզի առաջնորդի ուղարկած զեկուցման առաջը առած լինեն։

Ինչպէս վերև ասացի, աստրախանցիք ճնշող մեծամասնութեամբ որոշում են թեմ. դպրոցը բանալ անպատճառ Աստրախանում. սակայն ժողովի այդ որոշման դէմ բողոք է յայտնվում, մատնանշելով որ ժողովը լիրաւունք չունի, առանց թեմի հասարակութեան ձայնը լսելու, այդպիսի որոշում կայացնել։ Ժողովը չէ ընդունում բողոքարկուի պատճառաբանութիւնը. բայց բողոքողը շատ իրաւացի կերպով իր կարծիքը մացնել է տալիս արձանագրութեան մէջ։ Ժողովն ընտրում է իր նախագահ իրաւաբան Ռ. Աստուածատրեանին պատգամաւոր՝ Էջմիածին ուղարկելու՝ Վեհ. Կաթողիկոսի մօտ միջնորդելու և անձամբ ներկայացնելու ծխ. ժողովի որոշումը։ Պատգամաւորը ներկայանում է Վեհին և ներկայացնում է ծխ. ժողովի արձանագրութիւնը և՝ որպէս իրաւաբան՝ աշխատում է գործին աջող ընթացք տալու ի նպաստ աստրախանցիների։ Վեհափառը Էջմիածնի միաբան անդամներից մի մասնաժողով է նշանակում՝ քննելու և մշակելու թեմական դպրոցը որտեղ բանալու հարցը և ապա զեկուցումն ներկայացնելու իրան ի սնօրէնութիւն։

Մասնաժողովը երկդիմի քաղաքականութեամբ—«նէ շիշ հանսըն, նէ քեաբաբ»—թեմ. դպրոցի բացման հարցը քննած և մշակած յանձնում է Վեհափառին. բայց այդ զեկուցումը այնքան էլ համոզիչ չէ թւում և նրա մէջ մի առ մի մատնանշված չեն լինում թէ ինչ միջոցներից և ինչ աղբիւրներից պիտի պահպանվի թեմ. դպրոցը. ուստի Վեհը կարգադրում է, որ աստրախանցիք կրկին ընդհ. ծխ. ժողով կազմեն և որոշումն ուղարկեն իրան։

Աստրախանում այդ հարցի առիթով կազմված երկրորդ ընդհ. ծխ. ժողովում պատգամաւոր Ռ. Աստուածատրեանը յայտնում է Վեհափառի կարգադրութիւնը. ժողովը դարձեալ միաձայն որոշում է, ինչ գնով էլ լինի, թեմական դպրոցը բաց անել Աստրախանում. ժողովում որոշվում են թեմ. դպրոցի պահպանութեան միջոցները և աղբիւրները. Աստրախանի հայոց եկեղեցիների վրա նպաստներ են գցում. մոմավաճառութեան պահեստի վրա էլ 3000 ր., այսպիսով կազմում են թեմական դպրոցի վրա տարեկան ծախսվելիք 20,000 ր. մի հնչին գումար։

Այսպիսի պայմաններում Աստրախանի թեմ. դպրոցի բացման հարցը իրականացած պէտք է համարել թէ թերի։ Աստրախանցիք, լոկ անձնական շահերից դրդված, որոշել են, ինչ էլ լինի, թեմ. դպրոցը բաց անել Աստրախանում։ Աստրախանցիք համարձակ և խրոխտ կերպով ապացուցին, որ կարիք չեն զգում թեմի հայ հասարակութեան այլ և այլ հաստատութիւնների նիւթական օգնութեան... արհամարհելով թեմի ամբողջ հայութեան ձայնը։

Եթէ աստրախանցիք թեմի հայ հասարակութեան ձայնը արհամարհում են, սակայն այն հաստատութիւնը, որից կախված է այդ հարցի լուծման անկցիա տալու գործը, ի հարկէ չը պիտի վրիպեցնի իր ուշադրութիւնից ընդհանուրի շահերը և պիտի նկատի ունենայ շրջաբերական հրաման արձակել Աստրախանի թեմի բոլոր գաւառական քաղաքների հայ հասարակութիւններին, հրահանգելով որ թեմ. դպրոցը որտեղ բաց անելու մասին՝ ծխ. ժողովներ կազմեն և ժողովների որոշումները ուղարկեն իրան ի քննութիւն, որից յետոյ կորոշվի, թէ որտեղ աւելի յարմար է թեմ. դպրոցը բաց անել։

Մ օ զ դ օ կ Խ. Ք. Շահինեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Տեղեկութիւններ Սղնախի օրջանից

Սղնախ, 13 յունիսի

Անցեալ շաբաթ Անգամ և Վաքիլի գիւղերի ծայրում եկաւ խոշոր կարկուտ՝ ընկոյզի մեծութեամբ։ Կարկուտը մեծ վնաս հասցրեց ճիանտէ անտառի շուրջը գտնված այգիներին և արտերին։ Տեսարանը Սղնախից երևում էր, կարծես թէ դաշտը ծածկված լինի ձիւնով։ Անգամ գիւղում թէև կան կարկուտի դէմ մաքառող թնդանօթներ, սակայն գիւղացիները չեն կարողացել օգտվել նրանցից, այն ինչ կարդանախի գիւղացիները թնդանօթների օգնութեամբ ազատել են իրանց այգիները կարկուտի աւերածութիւնից։

Կէլմէչլուի գիւղում մի հայ երիտասարդ վաճառական նշանվում է տեղացի մի վրացի օրիորդի հետ, առաջուց պայման առնելով՝ որ օրիորդը ընդունի հայ-լուսաւորչական հաւատը։ Օրիորդը դիմում է թիշխանութեան և խնդրում է, որ թոյլ տրվի իրան փոխել իր հաւատը և ընդունել լուսաւորչական կրօնը։ Իշխանութիւնը տեղական գիւղական քահանային պատուիրեց՝ ձեռք առնել համապատասխան միջոցներ, որ նշանված օրիորդը հաւատարիմ մնայ պապական յուսնադաւան կրօնին և չը դաւաճանէ նրան։ Քահանայի յորդորներն ի զուր անցան։ Օրիորդը չը հրաժարվեց իր նշանածից։

Սղնախի գաւառի ուսուցիչները վճռել են ճանապարհորդութիւն կատարել դէպի Նոր Աֆոն։ Ցանկացողները ցուցակագրվում են։ Ճամբը կը մեկնի յունիսի 15-ին՝ այցելելով Բաթում, Փոթի, Սուխում, Նոր Աֆոն, Բուլթայիս, Գէլաթ, Մօծամէթ և Մցխէթ։

Ն. Ն.

Ներկայ տարվայ բօժօժի բերքը

Մեղրի, 28 մայիսի

Ներկայ տարին, իր անսովոր ու փոփոխական եղանակով, որոշ չափով վնասեց և Մեղրիի շրջանի գիւղացիութեանը, ոմանց զգալի, իսկ ոմանց թեթև։ Տարվայ վնասից զերծ չը մնաց և Մեղրիի հասարակութիւնը, առ այժմ շերամի վերաբերմամբ։ Մեղրիում, սովորական տարիներում, բօժօժաքաղը սկսվում էր մայիսի վերջերին և վերջանում յունիսի 10-ին, իսկ այս տարի ընկվեց մայիսի 5-ից և վերջացաւ նոյն ամսի 28-ին։ Տերևի պուդը ծախվեց 60—90 կ.։

Ընդհանուր առմամբ, նախորդ տարիների համեմատութեամբ, այս տարի Մեղրիի բօժօժի բերքը պակասում է քառորդ մասով, իսկ շրջակայ գիւղերինը՝ էլ աւել չափով։ Բացի այդ, նախկին տարիների համեմատութեամբ, յատկութեամբ էլ ցածր է։ Եւ այն, ինչ որ այս տարի ստացվեց, այդ էլ կիսով չափ պարտական ենք տեղական սերմերի լաւութեանը։ Շատ լաւ արդիւնք տուեց և Սամարղանդից ստացված Ե. Ա. Շաւարշի շերամի սերմը։

Այս տարի էլ մեղրեցիք տուժում են բօժօժի գների մէջ. միջա Օրդուբաթի և Ա-դուլիսի բօժօժները 2—3 ռուբլով աւել են ծախվում։ Հաւանական է 16—17 ր. հաշուեն։

Ե. Վարդանեան

Հեղդի զոհերը

Թանքեզ, 16 յունիսի

Երկարատև անձրևները և հեղեղները անվնաս չը թողին։

Ամսիս 12-ին Ասկերան բերդի առջևով անցնող Կոգաչա գետը, որ վերջին հեղեղներից չափազանց վարարած է լինում, ջրահեղձ է անում Ղլչբաղ գիւղացի մի կնոջ՝ իր երեք տարեկան երեխայով։

Ինչպէս պատմում են, այդ դէպքից երկու օր առաջ Քեաթուկ գիւղից թթի այգեստանները գալիս են Ղլչբաղ գիւղից մի քանի կին վարձում՝ թթի չագները պահելու համար։ Եւ երբ որ անընդհատ անձրևները թոյլ չեն տալիս դրանց աշխատելու, գալիս են, որ գետով անցնեն դէպի իրանց գիւղը։ Գոմէշներ լծած սայլ են նստում, որ անցնեն, և ահա գետի մէջտեղը սայլը շուռ է գալիս՝ անցնողներին գցում գետը։ Բարեբաղդաբար այդ միջոցին օգնութեան է հասնում գետի մօտ գտնվող քեաթուկցի Անդրէասը և ազատում քշվողներին. սակայն չէ տիզողում ազատել յիշեալ կնոջը և իր երեխային, որովհետև գետի միւս հոսանքովն են լինում քշվելիս։ Միայն գիակներն են ազատվում։

Նոյնպէս լուր է ստացվել, որ Հագրուեթում ևս գետը Վարթնաշատ գիւղացի մի կնոջ քշել և ջրահեղձ է արել։ Ա. Ա.

Այց Ա.Ճիին

Երևան, 17 յունիսի

Ամսիս սկիզբներին մի քանի ընկերներով որոշեցինք գնալ Անի այելութեան, և 13-ի գիշերվայ գնացքով ճանապարհ ընկանք։

Հասնելով Անի կայարանը և փոքր հանգստանալուց յետոյ շարունակեցինք մեր ճանապարհը տեղական կառքով դէպի Անիի մօտ գտնվող Խարկով գիւղը, ուսկից Ախուրեան գետի վրայով նաւելով հասանք Հայաստանի աւերակ մայրաքաղաքը։

Մի կողմ թողնելով յարգելի գիտնական պրոֆ. Մարրի և իր կապի յայտագործութիւնները, պարտաւորված եմ այդտեղ մատնանշելու այն սիրալիր ընդունելութեան վրա, որ ցոյց տուին մեզ Մարրի օգնական և այցելուներին հիւրընկալող Աշխարհ-բէգ Լօռու-Բալանթարը և իր ընկերները (պ. պ. Վրոյը, Բուլխաթեան, Տարագրօս և մի ռուս ընկերակից, որի ազգանունը դժբաղդաբար չեմ յիշում)։

Առանձնապէս Աշխարհ-բէգը մեծ պատրաստակամութեամբ բացատրում էր մեզ իրանց կատարած պեղումների մասին։

Ատ. Վարդանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

◆ Ինչպէս յայտնի է, Ռուսատանի հարաւում մրրկից վնասվածների օգտին հաւաքված գումարը գերազանցեց նրանց կարիքները, և այդ պատճառով կոմիտէի կովկասեան ճիւղի գանձակցում կայ առանց օգտագործելու մօտ 22,500 ր.։ Իր, մայիսի 5-ի որոշումով, ճիւղը լիազօրեց իր նախագահուհի կոմսուհի Ե. Ա. Լօրիս-Մելիքովային յիշեալ գումարը ենթարկել Թագուհի Կայսրուհու բարեհայեցողութեան, թէ ուր պէտք է ուղարկվի այդ գումարը։ Այժմ, Թագուհի Կայսրուհու բարեհաճ թոյլատրութեամբ, կոմսուհի Ելիզավետա Անդրէեվնա այդ գումարից 10,000 ր. փոխադրել է Երևանի նահանգապետին, որպէս նոր-պատ Երևանի նահանգի ազգաբնակութեան, որը վերջին ժամանակներս անգին վնասներ կրեց սաստիկ սառնամանիքներից։

◆ Երէկ, ամսիս 19-ին, դոկտոր Տաղաւարեան և Հ. Առաքելեան պատիւ ունեցան ներկայանալ փոխարքայի քաղաքացիական մասի օգնական հօֆմէյստէր Պետերսօնին։ Նրանք երկարօրէն բացատրեցին Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան նպատակն ու գործունէութիւնը։ Հօֆմէյստէր Պետերսօնը, համակրութեամբ վերաբերվելով, առաջարկեց ներկայացնել մի համառօտ տեղեկագիր յանուն փոխարքայի։

◆ Ռուսական Աշխարհագրական Ընկ. Կովկասի ճիւղի կարգադրիչ կոմիտէն իր արամադրութեան տակ հարկաւոր մէջ-ցիրը չունենալով այժմեանից իսկ ձեռնարկելու Կովկասի աշխարհագրութեան նկարագրութեան վերաբերեալ գիտական աշխատութիւններ մի քանի տարի՝ պարզ է թէ ինչ պիտի ներկայացնի իրանից հայ գաղութը, որը, ինչպէս ասացի, միայն առևտրականներից է բաղկացած։

Իրանց սովորական գործերից դուրս, ինչպէս որ սովորաբար նման տարրից բաղկացած ամեն հայ գաղութներում պատահում ենք, ամենամեծ հասարակական նշանակութիւն ունեցող հարցը այստեղ նկատվում է տեղական մատուռը և հայ քահանան։ Այդ մատուռը շուրջ տարի ու կէս է, ինչ հիմնված է և զբաղեցնում է այժմ ամենքին։ Ինձ ասացին, որ այդ մատուռը հիմնված չէ միմիայն հայ համայնքի կրօնական պահանջներին բաւարարութիւն տալու նպատակով, որ նա բացի նորածիններին մկրտելուց, ամուսնացողներին պսակելուց և մեռելներին թաղելուց՝ ունի նաև ուրիշ աւելի բարձր պաշտօն։ Նա կոչված է իբր թէ հայ գաղութի ապագայ սերունդը ազատելու օտարացման վտանգից և պիտի լինի հայութեան նշանաբանը և պաշտօնական ներկայացուցիչը Աւստրիայի համայն հայութեան։ Պարզ է ուրեմն, որ այդպիսի դեր յատկացնելով այդ հաստատութեան, «քահանայ» և «տիրացու» բառերը այնտեղ այլ ևս չեն հնչվում այնպէս, ինչպէս սովոր ենք մենք լսել Կովկասում։

Կիրակնօրեայ պատարագի ժամանակ տեսայ, թէ ինչպէս ցիլինդրաւոր պարոններ եկան շալիկ հագան և եռանդով մասնակցեցին ժամասացութեան։ Նրանց ոգևորողը անշուշտ այն համոզմունքն էր, թէ իրանք այդ բոլորին ներկայանում են Վիէննայի հայութեան կուլտուրտրեգերներ։ Զեմ մերժում, հայը ապրած է և շարունակում է ապրել այնպիսի կեանքով, որ նա դեռ սոխվված է փարել կրօնական հաստատութիւններին իր ցեղական գոյութիւնը պահելու համար, իսկ առանց այդպիսի մի տարրի՝ պարզ է թէ ինչ պիտի ներկայացնի իրանից հայ գաղութը, որը, ինչպէս ասացի, միայն առևտրականներից է բաղկացած։

Իրանց սովորական գործերից դուրս, ինչպէս որ սովորաբար նման տարրից բաղկացած ամեն հայ գաղութներում պատահում ենք, ամենամեծ հասարակական նշանակութիւն ունեցող հարցը այստեղ նկատվում է տեղական մատուռը և հայ քահանան։ Այդ մատուռը շուրջ տարի ու կէս է, ինչ հիմնված է և զբաղեցնում է այժմ ամենքին։ Ինձ ասացին, որ այդ մատուռը հիմնված չէ միմիայն հայ համայնքի կրօնական պահանջներին բաւարարութիւն տալու նպատակով, որ նա բացի նորածիններին մկրտելուց, ամուսնացողներին պսակելուց և մեռելներին թաղելուց՝ ունի նաև ուրիշ աւելի բարձր պաշտօն։ Նա կոչված է իբր թէ հայ գաղութի ապագայ սերունդը ազատելու օտարացման վտանգից և պիտի լինի հայութեան նշանաբանը և պաշտօնական ներկայացուցիչը Աւստրիայի համայն հայութեան։ Պարզ է ուրեմն, որ այդպիսի դեր յատկացնելով այդ հաստատութեան, «քահանայ» և «տիրացու» բառերը այնտեղ այլ ևս չեն հնչվում այնպէս, ինչպէս սովոր ենք մենք լսել Կովկասում։

Կիրակնօրեայ պատարագի ժամանակ տեսայ, թէ ինչպէս ցիլինդրաւոր պարոններ եկան շալիկ հագան և եռանդով մասնակցեցին ժամասացութեան։ Նրանց ոգևորողը անշուշտ այն համոզմունքն էր, թէ իրանք այդ բոլորին ներկայանում են Վիէննայի հայութեան կուլտուրտրեգերներ։ Զեմ մերժում, հայը ապրած է և շարունակում է ապրել այնպիսի կեանքով, որ նա դեռ սոխվված է փարել կրօնական հաստատութիւններին իր ցեղական գոյութիւնը պահելու համար, իսկ առանց այդպիսի մի տարրի՝ պարզ է թէ ինչ պիտի ներկայացնի իրանից հայ գաղութը, որը, ինչպէս ասացի, միայն առևտրականներից է բաղկացած։

Իրանց սովորական գործերից դուրս, ինչպէս որ սովորաբար նման տարրից բաղկացած ամեն հայ գաղութներում պատահում ենք, ամենամեծ հասարակական նշանակութիւն ունեցող հարցը այստեղ նկատվում է տեղական մատուռը և հայ քահանան։ Այդ մատուռը շուրջ տարի ու կէս է, ինչ հիմնված է և զբաղեցնում է այժմ ամենքին։ Ինձ ասացին, որ այդ մատուռը հիմնված չէ միմիայն հայ համայնքի կրօնական պահանջներին բաւարարութիւն տալու նպատակով, որ նա բացի նորածիններին մկրտելուց, ամուսնացողներին պսակելուց և մեռելներին թաղելուց՝ ունի նաև ուրիշ աւելի բարձր պաշտօն։ Նա կոչված է իբր թէ հայ գաղութի ապագայ սերունդը ազատելու օտարացման վտանգից և պիտի լինի հայութեան նշանաբանը և պաշտօնական ներկայացուցիչը Աւստրիայի համայն հայութեան։ Պարզ է ուրեմն, որ այդպիսի դեր յատկացնելով այդ հաստատութեան, «քահանայ» և «տիրացու» բառերը այնտեղ այլ ևս չեն հնչվում այնպէս, ինչպէս սովոր ենք մենք լսել Կովկասում։

Կիրակնօրեայ պատարագի ժամանակ տեսայ, թէ ինչպէս ցիլինդրաւոր պարոններ եկան շալիկ հագան և եռանդով մասնակցեցին ժամասացութեան։ Նրանց ոգևորողը անշուշտ այն համոզմունքն էր, թէ իրանք այդ բոլորին ներկայանում են Վիէննայի հայութեան կուլտուրտրեգերներ։ Զեմ մերժում, հայը ապրած է և շարունակում է ապրել այնպիսի կեանքով, որ նա դեռ սոխվված է փարել կրօնական հաստատութիւններին իր ցեղական գոյութիւնը պահելու համար,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Երրորդ անգամ լինելով այցելեցի Աւստրիայի մայրաքաղաք Վիէննա, որը այս անգամ աւելի ուշագրաւ և տպաւորիչ ազդեցութիւն արեց ինձ վրա, քան նախորդ ճանապարհորդութիւններիս ժամանակ։ Պատճառը անշուշտ այն հանգամանքն է, որ առաջվայ այցելութիւններս եղած են փրանսիական, բէլգիական և գերմանական երկիրներով դէպի հայրենիք վերադառնալիս, երբ Պարիզը կամ Բրիւսսէլը տեսնելուց յետոյ՝ Վիէննան չէր կարող առանձին տպաւորութիւն գործել. մինչդեռ այս անգամ մի քանի տարի անընդհատ Կովկասում ապրելով և կովկասեան կեանքի ազդեցութեան տակից անմիջապէս Վիէննա անցնելը բոլորովին այլ հանգամանք է, որով աւելի բըլնէֆ կերպով ինձ պէտք էր պատկերանար երկու երկիրների տարբերութիւնը։

Ռուսատանից Վօլօչինսկի վրայով աւստրիական սահմանն անցնելիս, երկաթուղու վագոնում առաջին բանը, որ ես զգացի՝ այն էր, որ ես մի այնպիսի պետութեան բնակիչ եմ, որի վարած քաղաքականութիւնը հաշտ չէ Աւստրիայի քաղաքականութեան, որ ես և ինձ նման բոլոր այն ճանապարհորդները, որոնք գալիս էին Ռուսատանից և ղժբաղդութիւն ունէին լեհերէն կամ գերմաներէն չը կարողանալ խօսել, նկատվում են այս երկրում իբրև հակառակորդներ և այդ պատճառով էլ էլ չէին կարող սպասել բարեացակամ վերաբերմունքի։ Մենք գանգատվում ենք ռուսական երկաթուղիների պաշտօնեաների վարմունքից, բայց տեսնելու բան էր այն կոպիտ և անքաղաքավարի վերաբերմունքը, որ ցոյց էին տալիս աւստրիական երկաթուղիների պաշտօնեաները մեզ հանդէպ։ Երևակայեցէք, ճանապարհորդներից մէկը պառկել է մի ազատ նստարանի վրա, գալիս է կօնդուկտորը և, առանց քաշվելու, ոտից քաշում է, ասելով՝ «վեր կաց, չէ կարելի պառկել»։ Մի ուրիշը Վօլօչինսկից մինչև Կրակով լուսամուտի մօտ իր տեղն ունէր բռնած. սա Կրակովում բուֆետ գնաց, իսկ նրա բացակայութեան ժամանակ նոր ճանապարհորդներից մէկը բռնեց այդ տեղը. նորեկին ոչ մի կերպ հնարաւոր չեղաւ համոզել, որ այդ տեղը թողնի, քանի որ նախապէս ուրիշին է պատկանում, թէև նոյն այդ կուպէում կային ուրիշ ազատ տեղեր։ Անքաղաքավարի վերաբերմունքի, հակակրական ակնարկների աւելի ստէպ էինք հանդիպում ռուսական սահմանի մօտ վայրերում։

Քաղաքական անտագոնիզմից առաջացած այդ հեռանքը ես բացատրում եմ նրանով, որ Աւստրիայում քաղաքական խնդիրները տարբեր կերպով է ըմբռնում ժողովուրդը, քան թէ մեզ մօտ։ Քաղաքական հարցերը Ռուսատանում միայն՝ իբր խօսակցութեան նիւթ են ծառայում ժողովրդական մասսայի համար. օրվայ քաղաքական հարցերի հետ ծանօթանում ենք միմիայն հետաքրքրութիւնից դրդված, նրանք ոչ մի կերպ չեն շաղկապվում մեր կեանքի իրական պահանջների հետ և օտար ազգերի հետ մեր ունեցած քաղաքական այս կամ այն տեսակի յարաբերութիւնը չի թողնում մեզ վրա որևէ առանձնայատուկ դրոշմ։ Սակայն այդպէս չէ ռուսական սահմանից այն կողմը ապրող ժողովրդի համար։ Ռուս-աւստրիական քաղաքականութիւնը բոլորովին տարբեր կերպով է ազդում աւստրիացիների կամ լեհ ժողովրդի վրա։

Արևմտեան Եւրոպայի ժողովուրդը, առհասարակ, աւելի սերտ կերպով կապված լինելով ամեն մէկը իր երկրի կառավարութեան հետ՝ աւելի զգայուն է օտար պետութեանց հանդէպ գոյութիւն ունեցող քաղաքական հարցերին, և նրա առօրեայ կեանքում իսկ այդ քաղաքականութիւնը արտայայտվում է ըէալ կերպով՝ հարձակն գոյութիւն ունեցող պայմանների։ Սակայն իմ ասածից թող չը հասկացվի, թէ, օրինակ, Վիէննայում, աւստրիական քաղաքական հակառակորդ մի երկրացի իր ամեն քայլափոխին պիտի զգայ քաղաքական անտագոնիզմի հետևանքը։ Այդ անտագոնիզմը ամեն մի աւստրիացու մէջ թաղված է սրտի խորքում և յայտարերվում է այն ժամանակ միայն, երբ հանգամանքները ներենս կարելի չէ սպասել, անշուշտ, որ հիւրասնոցի, ճաշարանի, գարեջրատան կամ որևէ խանութի սպասաւոր ձեզ խէթ աչքով նայի, քանի որ դուք նրա համար վատակի աղբիւր էք ներկայանում ձեր տալիք առատ նուէրներով, և նա ձեզ հետ քաղաքավարութեան բոլոր արտաքին ձևերով կը վարվի, առանց այդ բօպէին աչքի առաջ ունենալու ձեր ով լինելը։

Երկաթուղու վագոնում ունեցած յոռի արամադրութիւնս փարատվեց Վիէննա հասնելով. հիւրանոցում քաղաքավարութեան պահանջած բոլոր արտաքին ձևերով ընդունվեցի, և վագոնում ունեցած մղձաւանջս խպառ չքացաւ սպասաւորների խոնարհ բարեներից։

Վիէննան եւրոպական բոլոր խոշոր քաղաքների մէջ առաջին տեղն է բռնում պատուաւոր մուրացկանութեան մէջ. փողոցներում ոչ մի մուրացկան չէք գտնի, բայց և ոչ մի սրճարանից, ճաշարանից կամ գարեջրատանից չէք կարող ոտ դուրս դնել՝ առանց նուէրներ բաշխելու զանազան պաշտօն վարող սպասաւորներին։ Այդ սպասաւորների մէջ պաշտօնները առանձին կերպով բաժանված են. օրինակ՝ ճաշարաններում կերակուր բերողը առանձին սպասաւոր է, գարեջուր կամ ուրիշ որևէ խմիչք է բերում մի ուրիշը. իսկ փող վերցնողը այլ պաշտօնեայ է. և ահա բոլոր այդ մարդկանց առանձնապէս на чай տալու է։ Նուէրի սովորութիւնը այնքան ընդհանրացած է, որ նոյնիսկ տրամվայի տոմսակ ծախողին տալիս են։ Վիէննայի տարօրինակութիւններից մին էլ այն է, որ օտարականի համար շատ դժուար է շուկայում հաց ճարելը. փռներ չը կան, մեծ զործարաններ են հաց թխողները՝ ով գիտէ քաղաքի որ ծայրին, որոնք իրանց սեփական կառքերով հաց են մատակարարում տները. միայն մրգավաճառների մօտ կարելի է ճարել սովորական հացը, որ մի քանի կտոր խնամքով դարսած ունեն անտեսանելի մի տեղում։ Չը կան նաև շրջիկ լրագրավաճառներ. հատով լրագիր ծախելու իրաւունքը տրված է միայն ծախսա վաճառելու իրաւունք ունեցողներին. այդ իրաւունքը միայն որոշ արտօնութիւն ունեցողների սեփականութիւն է։

II

Իբրև աւստրիական առևտրի կենտրոնատեղի, Վիէննան գրաւած է միայն հայ առևտրական դասակարգին պատկանող հայ անհատների. այստեղ չը կայ հայ ուսանողութիւն։ Վիէննայի բժշկական ֆակուլտէտը առարաղ առաջին և միակ հայը եղած է մեր երկրից, որը արդէն վերադարձած է Կովկաս. այժմ կայ նաև մի թիւրքահայ երիտասարդ, որ վերջացնում է իր իրաւաբանական մասնագիտութիւնը այստեղ։ Մի կողմից օտարների համար շատ դժուար լինելով Վիէննայի համալսարանում ընդունվելը, միւս կողմից ապրուստի չափազանց թանգութիւնը արգելք է հանդիսացել, որ հայ ուսանողները կարողանան գալ Վիէննա։

Գոմէշներ լծած սայլ են նստում, որ անցնեն, և ահա գետի մէջտեղը սայլը շուռ է գալիս՝ անցնողներին գցում գետը։ Բարեբաղդաբար այդ միջոցին օգնութեան է հասնում գետի մօտ գտնվող քեաթուկցի Անդրէասը և ազատում քշվողներին. սակայն չէ տիզողում ազատել յիշեալ կնոջը և իր երեխային, որովհետև գետի միւս հոսանքովն են լինում քշվելիս։ Միայն դիակներն են ազատվում։

Նոյնպէս լուր է ստացվել, որ Հագրուեթում ևս գետը Վարթնաշատ գիւղացի մի կնոջ քշել և ջրահեղձ է արել։ Ա. Ա.

Այց Ա.Ճիին

Երևան, 17 յունիսի

Ամսիս սկիզբներին մի քանի ընկերներով որոշեցինք գնալ Անի այելութեան, և 13-ի գիշերվայ գնացքով ճանապարհ ընկանք։

Հասնելով Անի կայարանը և փոքր հանգստանալուց յետոյ շարունակեցինք մեր ճանապարհը տեղական կառքով դէպի Անիի մօտ գտնվող Խարկով գիւղը, ուսկից Ախուրեան գետի վրայով նաւելով հասանք Հայաստանի աւերակ մայրաքաղաքը։

Մի կողմ թողնելով յարգելի գիտնական պրոֆ. Մարրի և իր կապի յայտագործութիւնները, պարտաւորված եմ այդտեղ մատնանշելու այն սիրալիր ընդունելութեան վրա, որ ցոյց տուին մեզ Մարրի օգնական և այցելուներին հիւրընկալող Աշխարհ-բէգ Լօռու-Բալանթարը և իր ընկերները (պ. պ. Վրոյը, Բուլխաթեան, Տարագրօս և մի ռուս ընկերակից, որի ազգանունը դժբաղդաբար չեմ յիշում)։

Առանձնապէս Աշխարհ-բէգը մեծ պատրաստակամութեամբ բացատրում էր մեզ իրանց կատարած պեղումների մասին։

Ատ. Վարդանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

◆ Ինչպէս յայտնի է, Ռուսատանի հարաւում մրրկից վնասվածների օգտին հաւաքված գումարը գերազանցեց նրանց կարիքները, և այդ պատճառով կո

թեան հրատարակութեան, միջնորդութիւն է յարուցել, որ Անդրկովկասի զէմստվային գումարներից, իր ձեռնարկութիւնը իրագործելու համար, տարեկան 2500 ր. յատկացվի մի քանի տարվայ ընթացքում, ընդամենը 10,000 ր։ Փոխարքայի խորհուրդը, որի քննութեանն էր յանձնված այդ միջնորդութիւնը, անհնար գտաւ այդ գումարը յատկացնելը և մերժեց միջնորդութիւնը։

✦ Վերջին ժամանակներս Թիֆլիսում և նահանգում բացվել են հետևեալ հիւանդանոցային գանձարկղները. 1) առանձին գանձարկղը Ա. Հ. Էնֆիաճեանի ծախսոտի գործարանին կից, 2) Գ. Գ. Ադէլխանով ակցիօներական ընկ. կից., 3) «Ն. Ի. Բոզաջեան և որդիք» ծխախոտի գործարանին կից, 4) Անօնիմ էլեքտրաքարշի ընկ. մէջ, 5) ընդհանուր գանձարկղ, «Помощь» անունով, գտնվում է Զերքեզօվսկայա փողոցի վրա № 59 տանը։ Բացի սրանցից Թիֆլիսում բացվել են և ուրիշ տասը գանձարկղներ զանազան ընկերութիւններին և հիմնարկութիւններին կից։ Հիւանդանոցային գանձարկղներ բացվել են և Թէլաւում ու Բորժոմում։

✦ Թիֆլիսում կազմվել է «Opomenie» (ոռոգումն) անունով մի ընկերութիւն, որի նպատակն է մեքենաներով կուր գետից ջուր բարձրացնել գետի աջ ափին, Ղարաեազի դիմաց եղած վարելահողերը (մօտ 800 դես.) ջրելու համար։ Ջուրը արդէն բարձրացված է յիշեալ հողերը, որոնք տեղ-տեղ ցանված են բամբակով։ Բնորոշ է ընդգծել այն հանգամանքը, որ երբ ընկ. մեքենաները ջուրը բարձրացրին, գիւղացիները սաստիկ զարմացան և ուրախութիւնից ոչնչացրին ցորենի նախկին ցանքերը և ամբողջ տարածութիւնը բամբակ ցանեցին։

✦ Զորեքշաթի, ամսիս 18-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ Պետ. Հեռ. Գործակալութեան Թիֆլիսի բաժանմունքի կառավարիչ Բալանթար Խվ. Քալանթարեանի յուշարկաւորութիւնը։ Նախորդ երեկոյեան նրա մարմինը, որ բերվել էր արտասահմանից, փոխադրվեց Թիֆլիսի կայարանից Քամոյեան եկեղեցին։ Ցուղարկաւորութեան և թաղման ներկայ էին ինտելիգենցիայի և հասարակութեան զանազան ներկայացուցիչներ, ինչպէս և պաշտօնական անձինք։ Դագաղի վրա դրված էին մի քանի պսակներ, որոնց թւում Պետ. Հեռ. Գործ. ից, Թայիրով և Միլով ընկերութիւնից, հանգուցեալի ծառայակիցներից, ազգականներից։ Բացի դրանից՝ զանազան անձինք՝ պսակի փոխարէն՝ դրամական նուիրաբերութիւններ էին արել զանազան բարեգործական հաստատութիւնների։ Ինչպէս առաջ ևս յայտնել էինք, հանգուցեալի մահվամբ տեղական ինտելիգենցիան ունեցաւ մի զգալի կորուստ։ Հանգուցեալը հողին յանձնվեց Խօջիվանքի գերեզմանատանը։

✦ Նախկին ոստիկանապետ գեն. Զասիպկին նշանակվում է Սուխումի շրջ. կառավարիչ, Բալախանի-Սարունչիի ոստիկանապետ գնդապետ Զդանովսկին—Թիֆլիսի ոստիկանապետ, իսկ Բաթումի նախկին ոստիկանապետ Պանին նշանակվում է Բալախանի-Սարունչիի ոստիկանապետի պաշտօնակատար։

✦ Առաջիկայ սեպտեմբերի 15-ից Թիֆլիսում գումարվելու է համառուսական երկաթուղային բժիշկների համագումար, որը տեւելու է մօտ մի շաբաթ։ Համագումարի նիստերը լինելու են Կովկ. Բժշկական Ընկ. շէնքում։

✦ Գօրու գաւառում կատարած իր ճանապարհորդութիւնից Թիֆլիս վերադարձաւ նահանգապետ Ա. Գ. Զերնեավսկի։

✦ Անցեալ օրը, քաղաքագլխի պաշտօնակատար Գ. Դ. Ժուրուլին և քաղ. վարչութեան անդամ Մ. Ն. Աթաբէկեան դիտեցին քաղ. Աբրամեանի անուան հիւանդանոցը և Զուբալովի անուան մանկական հիւանդանոցը, պարզելու համար, թէ ինչպիսի վերաշինութեան կարիք են զգում այդ հիւանդանոցները։

✦ Նահանգապետը թոյլատրել է վրացի ասիական կոշկակարներին առանձին համքարութիւն կազմել։

✦ Պետերբուրգից Թիֆլիս վերադարձաւ երկրագործութեան Թիֆլիսի վարչութեան կառավարիչ Վ. Ի. Կօրսիկ-Պավլովսկի։

✦ Բանաստեղծ Կ. Դ. Բալմոնտ ձեռնարկել է Բուսթավելիի «Ընձեռնաւորը» պօէմայի թարգմանութեան։ Այս օրերս նա իր թարգմանութիւնից մի քանի հատուած ուղարկելու է տիկ. Թամարա Կանչելիի անունով։ Ինչպէս ասում են, թարգմանութիւնը մօտ է ընդարձակ և կատարված է հնչիւն տողերով։

✦ Մեզ խնդրում են բարեգործ անձանց ուշադրութիւնը հրաւիրել Աննա Զաւրեանց անունով մի խեղճ կնոջ վրա, որի ամուսինը երկար ժամանակ է ծանր հիւանդ է, հեռաւոր և ինքն ու իր եօթը մանկահաս երեխաները ենթարկված են ծայրայեղ կարօտ դրութեան։ Ինչպէս մեզ հաւատացնում են, յիշեալ ընտանիքը օրերով քաղցած դրութեան մէջ է մնում, շնորհիւ գլխաւորապէս այն բանի, որ ընտանիքի անդամներից ոչ օք սովոր չը լինելով մուրացիկ կանգին՝ ամաչում է դիմում անել բարեգործ անձերին և նպաստ խնդրել։ Այդ ապաբաղդ ընտանիքին օգնել ցանկացողներին խնդրում են նպաստներն ուղարկել հետևեալ հասցէով. Чугуретскій пер. № 3, д. Хачатурова (VIII участокъ)։ Կարելի է յանձնել նաև «Մշակի» գրասենեակին՝ հասցնելու ըստ պատկանելոյն։

—

ԿՈՎԿԱՍ

✦ Բալախանում, «Կաւկաս» ընկ. և «Նոր Նոբէլ» ընկ. բանուորները հրաժարվեցին իրանց ներկայացված հաշիւներից, յայտնելով, որ կը վերցնեն միայն այն պայմանով, եթէ 3 ամսվայ ռոճիկը առաջուց տան։

✦ Բօրչալուի գաւառում աւազակ Ակոփ Դուրսենովին (որը այդ գաւառում գերել է մի քանի հոգի) հետապնդելու ժամանակ պահակախումբը մասերի բաժանված մի քանի տեղ դարան մտաւ։ Այս յունիսի 15-ի գիշերը պահակախմբի մասերից մէկը նկատեց 4 ձիաւորների, որոնք ոտից մինչև գլուխ զինված անցնում էին կամուրջով։ Պահակամասի ձայնի վրա անցնողները կրակ արձակեցին։ Պահակամասը պատասխանեց նրանց հետդհետէ մօտենալով աւազակներին։ Վերջիններս նկատելով, որ իրանց ընկերներից մէկը ընկաւ ձիուց, փախստականի դիմեցին։ Հրաձգութեան վայրում երկու աւազակ սպանվեցին, իսկ երկուսը կարողացան փախչել, որովհետև խիստ մութ լինելու պատճառով անհնար էր հետեւել նրանց։ Սպանվածների մօտ կային հրացանները, մի քանի փամփշտակալներ՝ լի փամփուշտով։ Սպանվածներից մէկը, ինչպէս երևաց, Ղազախի գաւառի Շիլի գիւղացի Մուսա Քեաբիմ-օղլին էր, որին «Խօնչու» էին կանչում. միւսի անձնաւորութիւնը ճանաչված չէ։ Հրացանաձգութեան ժամանակ պահակախմբից ոչ-ոք չը վնասվեց։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

✦ Պետերբուրգում գումարված մահմեդական համագումարի երրորդ նիստում, յունիսի 17-ին, ի թիւս այլ զեկուցանողների, զեկուցում կարդացած իմամ Կուրամշինը տաք ճառով պահանջում է կանանց իրաւահաւասարութիւն։ Համագումարը կազմեց երեք մանաժողով—կամակերպչական, ուսումնական և վակուֆային։ Նիստին տեղի ունեցաւ միջադէպ. մինիստրութեան ներկայացուցիչը խնդրում է Կուրամշինին խօսել ռուսերէն, փոխանակ թուրքերէնի։ Պ. Դումայի անդամ Զաֆարովը հարցնում է թէ՝ ինչի վրա է հիմնված մինիստրութեան ներկայացուցչի պահանջը։ Վերջինս յենվում է համագումարի կայացրած որոշման վրա։ Ճառը թարգմանվում է։ Իմամ Աբդրաշիտովը յայտնում է, որ «չէ կարող թարգմանել իր ճառը» մինչև մինիստրութեան ներկայացուցիչը խնդրում է արձանագրել, թէ հռետորը «չէ կամենում ռուսերէն խօսել»։ Միջադէպը հարթված է։

✦ Բանտային վարչութիւնը դիմեց նահանգապետներին, առաջարկելով գումարել մօտիկ ապագայում նահանգական բանտային խորհրդակցութիւններ՝ տեղական բանտերում գոյութիւն ունեցող թոքախտի դէմ մաքառելու միջոցներ մշակելու համար։

✦ Պրոֆ. Մերէժկովսկին որոշված է յանձնել դատարանին։ Ցատուկ մարդ է մեկնում արտասահման՝ պարզելու տխրահռչակ ասպետի ուր գտնվելու տեղը։

✦ Պետ. Խորհրդի երկրորդ դեպարտամենտը որոշել է Անդրպարսկական երկաթուղու առաջին մասի կառուցումը յանձնել ինժեներ Պուտիլովին։

✦ Պետ. Խորհրդի նախագահ Ակիմովի հեռանալը սենսացիա է առաջացրել Խորհրդում։ Ինչպէս ենթադրում են, Գոլուբեվի և Մանուխինի նշանակումը ժամանակաւոր չէ։ Այդ նշանակումը կապում են այն բանի հետ, որ Ակիմովը իր ազդեցութիւնը կորցրել էր Խորհրդում և բարձր շրջաններում։ Պետ. Խորհրդի աշակողմեան անդամները ցնցված են դրանից։ Դուրնովոն գիտէր այդ փոփոխութիւնների մասին, բայց նախօրօք գնաց արտասահման։ Պետ. Խորհրդում խօսում են պետական կուրսի փոփոխութեան մասին։

✦ Սենատոր Մանուխինի նշանակումը՝ Պետ. խորհրդի ժամանակաւոր փոխ-նախագահի պաշտօնում, համակրութեամբ ընդունվեց կենտրոնի խմբակների կողմից։ Մինչդեռ աշակողմեանները պարզվեցին, որոնք իրանց կողմից առաջ էին մղում Դուրնովոյի թեկնածութիւնը։

✦ Մինիստրների խորհուրդը մերժեց Իլիոդորի խնդիրը՝ պատգամաւոր Մակլակովին պատասխանատուութեան ենթարկելու մասին և յետաձգեց Կիևի նահանգապետի կողմից Պուրիշկեվիչին դատի ենթարկելու հարցը։

✦ Վլադիկավկազի երկաթուղու Նովօրոսիյսկի ճիւղի Կուբան և Զնեմ իշխանների միջև քար նետվեց վագոնի լուսամտի վրա։ Փշրված ապակիներից՝ երեսից վիրաւորվեց ծովային մինիստրի օգնական Բուբնովի։ Կասկածով ձերբակալվեցին 50 երեխաներ, որոնք մօտակայքում խաղում էին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Դերմանական նոր գրականութեան պատմութիւն» (Համառօտ ակնարկով սկզբնական շրջանի մասին), Դ. Ալթունեանի, 1914 թ., Վաղարշապատ, 275 էջ։

II

Ալթունեանը օգտվել է, ինչպէս ինքն է ասում, բազմաթիւ աղբիւրներից և, ըստ երևոյթին, օգտվել է առանց ընտրութեան։ Տեղ է տուել իր գրքում պիտանի և անպիտան կարծիքներին։ Դուրս է գալիս, օրինակ, որ «հանճարեղ Ֆրիդրիխ II» գերմանական ժողովրդի «հոգեկան անկախութեան ձգտումները» մեծ չափով առաջ է մղում։ Ալթունեանի ասելով, «Գերմանիայում առաջին անգամ նա է (Ֆրդրիխ II-ը), որ խղճի պայծառ գիտակցութեամբ ապատութեան սկզբունքն է հռչակել»։ Այսպիսի մի միամիտ կարծիք արտայայտելու համար պէտք է լինել չափազանց միամիտ քաղաքագէտ։ Նախ պէտք է կազմողը պարզէր, թէ ինչպիսի «ազատութեան» մասին է խօսում և ինչ էր Ֆրիդրիխ II-ի ազատասիրութեան էութիւնը։

«Իմ պետութեան մէջ բոլոր կրօնները ազատ գոյութեան իրաւունք ունեն. և իմ հպատակներից իւրաքանչիւրը կարող է երջանկանալ իր ուզած ձևով»,—ասել է այդ թագաւորը։ Եւ Ալթունեանը հաճած իւղի տեղ է ընդունել այդ խօսքերը, բառացի հասկանալով նրանց իմաստը և Ֆրիդրիխին վերագրելով գերմանական «ազգային ինքնագիտակցութեան» առաջ մղման փասատը։

Քսաներորդ դարում գիտութեամբ ու գրականութեամբ պարապող Ալթունեանի համար տակաւին միտապաղ մի զանգուած է ներկայանում «ազգը»։ «Ազգային գիտակցութիւն», «ազգային տեսակէտ», «ազգ», նոյնիսկ «ազգային հայրենասիրութիւն» գաղափարները անդադար հոլովվում են նրա բերանում, առանց արտայայտելու որոշ բովանդակութիւն։ Աշխատելով տալ Լէսինգի կեանքի և գրական գործունէութեան ընութագիրը, հեղինակը այդ նշանաւոր մարդու գործն ու էպօխան ոչնչով չէ կապում ընդհանուր գերմանական իրականութեան մէջ առաջ եկած նոր բաղխումների հետ։ Հէնց այն հերդերը, որին մէկ տեղ է դնում Լեսինգի հետ, ինչպէս ասում է Ալթունեանը, պարզ կերպով ընդգծել է, թէ «բանաստեղծը (կամ գրողը) պէտք է հակացվի ոչ միայն իր երկրից, այլև այն միջավայրից, որի մէջ նա ապրում է»։ Եւ այդ նոյնիսկ շալուն, պարզ ճշմարտութիւնը Ալթունեանի աչքից մնացել է։

Խօսելով գերմանական Sturm und Drang-periode-ի («փոթորկի ու գրոհի» շրջան) մասին, կազմողը տարօրինակ մտքեր է արտայայտում (միևնոյն է, իրանը թէ ուրիշից փոխ առած)։ Այդ շրջանը նրա տեսակէտից նախ և առաջ «ազգային-հոգևոր-բարենորոգչական-կրօնական» է եղել, որ «գնալով բուռն ու փոթորկալի կերպարանք է ստանում, վերջապէս փոխվում է գրական, մտաւոր ու հասարակական յեղաշրջման»։ Շարժման գաղափարը ծնվել է մի քանի մոլեռանդ, տաք-գլուխ երիտասարդների ուղեղում, որոնք ուզել են «վերատեղծել հին գերմանական ինքնուրոյն կեանքը» և այլն և այլն։ Այսպէս է գրում Ալթունեանը, չը գիտենք՝ իր կարծիքները թէ ուրիշներինը։

Այստեղ նորից յանձին Ալթունեանի մենք տեսնում ենք այն «վարձատու» մարդուն, որ Կրիլովի թանգարանում բոլոր տեսակի մժղուկներին տեսնելուց յետոյ՝ պատմական փղին չէ նկատել։ Եւ սակայն այդ պատմական «փղին» չը տեսնողը ոչքան անգամ պատմական մատերիալիզմի, այն է՝ «փղի» դէմ «խոյացել» է։ Կրօնական-բարենորոգչական ազգային այդ շարժման շնչի, յեղափոխող հոսանքի գլխաւոր էութիւնը Ալթունեանը ճգնում է տեսնել Շիլլերի «Աւազակներ»-ի և Գէօթէի «Վէրթերի տանջանքներ»-ի մէջ։ Ըստ երևոյթին, կազմողը խսպառ էլ չէ ըմբռնել վերոյիշեալ գրուածների գլխաւոր էութիւնը, կարծելով որ դրանք նոյնպէս մի-մի Լիւթերներ են։

Նկատելի է, որ կազմողը իր յիշատակած աղբիւրներից մէկից քաղել է այս էպօխայի մասին այն տեղեկութիւնը, թէ «գերմանական տերիտորիալ իշխանները յեղափոխականների բուռն զայրոյթի առարկան էին դարձել»։ Ինչու։ Ինչու ապեռական դարերում երդում էին հէնց այդ «տերրիտորիալ իշխանների» իրանց «բօմանտիկ» ամրոցներով, իսկ Sturm und Drang շրջանում՝ ատում։ Այդպիսի հարցեր տալ կազմողին աւելորդ է։ միևնոյն է, նա պատասխան չունի. կամ շատ-շատ անորոշ ու ընդհանուր բառերով կը բաւականանայ, ինչպէս, օրինակ. «Ամբողջ XVIII դարի կուլտուրայի խտացումով է մլայն, որ հնարաւոր է դառնում այդ երկու մեծ գրողների (Շիլլերը, Գէօթէ) գոյութիւնը»,—ասելով անցնում է նաև Մեթէ կը պատասխանի նա մեզ, եթէ հարցնենք՝ որպիսի կուլտուրայի խտացման մասին է խօսքը։

Գէօթէի և Շիլլերի կեանքի և գործունէութեան վրա նա բաւականաչափ կանգ է առնում և, պէտք է ասած, նրանց գործերի համառօտ ուրվագիծը ըստ ամենայնի ամփոփ կերպով է տալիս, առանց հարկաւ սեփական տեսակէտի։ Ուստի և յաճախ չէ նկատում հիմնական սկզբունքների այն տարբերութիւնները, որոնք, օրինակ, գոյութիւն ունեն միևնոյն հեղինակի երկու տարբեր գրուածքների մէջև։ Օր., ինչ հիմնական տարբերութիւն կարելի է գտնել «Աւազակների» և «Վիլհելմ Թելլի» մէջև։ Մեթէ ոչ մի զանազանութիւն չը կայ Կարլոս Մոորի խորտակված ինդիվիդուալիզմի և շվեյցարական ժողովրդի («Վիլհ. Թելլ») յաղթանարող կոլլեկտիվիզմի մէջև։ Իսկ եթէ այդպիսի մեծ խնդիրներ՝ գրուածքներից բղխող՝ «գրականութեան պատմութիւն» գրողի աչքից վրիպում են, ապա ուրեմն աշխատանքի խոշոր մասը պիտի ապարդիւն գործ համարել։

Անցնելով բօմանտիզմին, կազմողը թէև յաճախ է խօսում գրական այդ ուղղութեան մասին, սակայն ոչ մի տեղ գտնէ երկու խօսքով չէ շեշտում նրա ծագման պատճառների մասին։ Այդ ուղղութիւնը, ինչպէս և ամեն բան, կարծես ծնվել է «բօմանտիզմի» մարդկանց գլխում, ապա և պատուաստվել կեանքում։ Նոյն թերութիւնը, նոյն պակասաւոր գիծը նկատում ենք բայրոնիզմի ընորոշման խնդրում։

Ալթունեանը զարմանալի կերպով լռելեայն անցնում է այնպիսի գրական հոսանքների և ուղղութիւնների ծագման և էութեան ընորոշումների մօտով, որպիսիք են բօմանտիզմ, բայրոնիզմ, համաշխարհային թախիծ և այլն։ Իսկ մի այնպիսի պատասխանատու աշխատութեան մէջ, որպիսին է գրականութեան պատմութիւնը, այն էլ հերօական բարդ իրականութիւնից վերցրած գրականութեան, անթոյլատրելի պակասութիւն է գրական բոլոր հոսանքների և ուղղութիւնների ծագումն ու էութիւնը հիմնատարպէս չը շօշափելը։

Խօսելով Նիկոլաուս Լենաուի մասին, կազմողը ասում է, թէ գերմանական գրականութեան մէջ այդ բանաստեղծը միակն է, որպէս «համաշխարհային թախիծի» լիակատար արտայայտիչը այնպէս, ինչպէս Պուշկինն ու Լերմոնտովը ռուսաց գրականութեան մէջ։

Այստեղ թող թոյլ տրվի մեզ նկատել, որ կազմողը ռուս բանաստեղծների մասին շատ կցկտուր տեղեկութիւն ունի։ Լէնաուի մասին ասածը քաղուածք է, ուստի և ճիշդ է, բայց անալոգիան Պուշկինի և մասամբ Լերմոնտովի նկատմամբ արդիւնք է կատարեալ անտեղեկութեան ռուսաց գրականութիւնից։

Ինչպէս վերևը նկատեցինք, «գերմանական գրականութեան պատմութիւնը» կազմողը ոչ մի վայրկեան չէ մտածել իրերի և երևոյթների խորքը թափանցելու։ Գրականական-պատմական որ շրջանն ուզում էք վերցրէք նրա գրքում, ոչ մի տեղ կազմողի խորաթափանց հայեացք չէք տեսնի։ Ծանծաղամտութիւնը կատարեալ է ամենուրեք, լինի դա «բօմանտիկ դպրոցը», էպօխան, լինի «երիտասարդ Գերմանիայի» կամ «բանաստեղծական բէալիզմի» (երևի, ուզում է ասել գեղարուեստական բէալիզմ), միևնոյն է, էպօխաների ընդհանուր տեսութիւնները լրագրային թեթև յօդուածների տպաւորութիւն են թողուն։ Պարզապէս նկատելի է, թէ ինչպէս գրված է անտեսակէտ, գրական շարժումների էութիւնից անտեղեակ, հասարակական յեղաշրջումների և նոյն ժամանակշրջանի մարդկային պսիխիկայի մէջև եղած յարաբերութիւնները չը ըմբռնող, սակայն «ազգային»ինչոր անորոշ քաղաքական իդեալներ որոշող մի քաղքենիի ձեռքով։

Սուրբաթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 17 յունիսի

Թիֆլիսում հրատարակվող մի հայ օրգան իր № 128-ում տպել էր մի յօդուած ընդդէմ պ. պ. Սա. Մալխասեանցի և Իս. Ցարութիւնեանի։ Կարդալով այդ գրութիւնը՝ չը կարողացանք չարտայայտել մեր զարմանքը, թէ ինչպէս այդպիսի մեծ դրծիչներ, որոնք իրանց ամբողջ կեանքում աչքի են ընկել իրանց մանկավարժական և գրական գործունէութեամբ և որոնք կը շարունակեն էլ, յանկարծ մի քանի անձանց աչքում հանդիսանում են որպէս ոչ պիտանի մանկավարժական ասպարէզին և կարօտ հանգստութեան, որովհետև, ինչպէս նրանք շեշտում են, «երկուսի դէմ էլ միշտ բացարձակ դժգոհութիւններ են եղած, առանձնապէս աշակերտութեան կողմից»։

Ասացէք խնդրեմ, մտե՞լ էք դուք այդ աշակերտութեան մէջ, ճանաչում էք այդ աշակերտութիւնը, անձամբ լսե՞լ էք նրանց զանգատներն ու դժգոհութիւնները. եթէ լսել էք, տուէք փաստեր։ Գուցէ դուք դիկավարվում էք մի քանի անհատների առածներով, որոնք ի նկատի ունենալով անձնական շահերը, իրանց նեղ ուշարահայեացքով չը կարողանալով անաչառութեամբ վերաբերվել դէպի ուսուցչական կազմը, ասէ-կոսէների նիւթ են դարձնում տեսչին և այս կամ այն ուսուցչին։ Բայց դրան հաւատալ վայել չէ չափահաս մարդկանց։ Որքան ծիծաղելի է լսել, որ պ. պ. Սա. Մալխասեանցը և Իս. Ցարութիւնեանը առաջադիմութիւն չեն ցոյց տալիս, գիտութեան հետ զուգընթացաբար առաջ չեն գընում և իբր թէ ոչ մի վարկ ու հեղինակութիւն չեն վայելում աշակերտութեան մէջ. որչափ տարօրինակ և որչափ ծիծաղելի կարծիք։ Դուք գտնում էք, որ ոչ պ. Սա. Մալխասեանը և ոչ էլ պ. Իս. Ցարութիւնեանը չեն կարող վարել ճեմարանի վերատեսչի պաշտօնը, որովհետև նրանք չեն կարող օգնորել աշակերտութեան, որովհետև նրանց մէջ պակասում է ստեղծագործող ոյժը. ապա ով էր ամբողջ Ցոլշանեան դպրոցին օգնորութիւն ներշնչում, ով էր այնպիսի մեծ եռանդով կառավարում դպրոցը, ներշնչում աշակերտութեանը սէր դէպի մանկավարժական գործունէութիւնը և ինքնուրոյն աշխատութիւնը, եթէ ոչ սրանք, որոնք իրանց անձնական կեանքով օրինակ էին դառնում մեզ, մէկը իր գիտական աշխատանքներով և աշխատասիրութեամբ, միւսը՝ մանկավարժական գործունէութեամբ։

Եւ ինչպէս չը զարմանալ, երբ որ աշակերտութեան մտքում աշխատանք և Սա. Մալխասեան միշտ զուգորդված են անխախտելի կերպով. նա որ իր եռանդով և կայուսաուեցմամբ աչքի է ընկնում, և աշակերտութիւնը յափշտակված է նրա անսպառ էներգիայով. պ. Մալխասեանը ոչ միայն սէր, յարգանք և համակրութիւն է վայելում աշակերտութեան կողմից, այլև նրան պաշտում է աշակերտութիւնը որպէս մարդկային բոլոր լաւագոյն արժանիքների մարմնացում։ Գալով երկրորդին՝ պ. Ցարութիւնեանին, նա նոյնպէս աշակերտութեան յարգանքն է վայելում. աշակերտութիւնը տեսնելով նրան՝ չէ կարող պատկառանքով և ակնածութեամբ չը վերաբերվել դէպի նա. պ. Ցարութիւնեանի հեղինակութիւնը շատ մեծ է աշակերտուհիների մէջ և նրա անունը յիշվում է մեր մէջ մեծ յարգանքով։

Մենք, Ցոլշանեան-Մարիամեան դպրոցի այս տարվայ շրջանաւարտները, տոգորված երախտագիտութեան զգացմունքներով՝ խորին շնորհակալութիւն ենք յայտնում մեր սիրելի տեսչին այն հայրական խնամքի համար, որ նա այս 4 տարվայ ընթացքում տածել է դէպի մեզ, և իր անդուլ գործունէութեամբ սէր է ներշնչել դէպի գիտութիւնը։

Ցոլշ.-Մարիամեան օր. դպրոցի
Այս տարվայ շրջանաւարտներից

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

—

Կիւմկիւմ (Վարդօ), 30 մայիս

Սալընկան, Գիւնտէմեր, Բասքան և այլ գիւղերէ եկած բոլոր գիւղացիներ կառավարութեան դուռը կը բաղխեն իրենց բողոքներով մուխլի և մուխնսիզ (ապաւէն ունեցող և անապաւէն) զինուորագրները ժողվելու առթիւ ժանդարմներու կողմէ գործ դրուած անարդար, բռնի ու անխղճ արարքներու դէմ, բայց ոչ օք կը լսէ ասոնց բողոքը. սովորական «ինչարբնա բաքարդա» կառավարական պաշտօնական դարձուածքը մէկէ աւելի անգամ կրկնելով բո-

լոր բողոքողները ճամբայ կը դնեն. ժանդարմները ալ աւելի երես տուած կառավարութեան այդ անուղղակի խրախուսանքէն՝ կը ծեծեն, կանարգեն և ամեն տեսակի փողոցային լուտանքներ կը թափեն բոլոր ասոնց վրայ, որոնք դժբաղդութիւն են ունեցեր հայ ըլլալու և մանաւանդ զինուորցու՝ Ռուսաստան գաղթած զաւակ, ազգական կամ համագիւղացի ունենալու։

Անցեալ օր Օվէեանը բերին և Կիւմկիւմի կառավարութեանը ցուցուցին։ Խեղճ գիւղացին փայտերով, հրացանի կոթերով այնպիսի անխիղճ ու անմարդավայել ծեծի ենթարկուեցաւ, որ ամբողջ մարմինը կապկապոյտ դարձաւ։ Դիակի պէս կապտած ու վէրքերով լի՝ ծեծուած գիւղացին ներկայութիւնն անգամ ոչ մէկ ազդեցութիւն ունեցաւ թիւրք պաշտօնեաներու սրտերուն վրայ... Պակաս օրի չեն հասած և գիւղացիներ Կարապետ Համբոյեան, Քնտոյեան, Ըվկէեան, Մուղսու Աբրահամ և ուրիշներ։ Ի՞նչ պիտի ըլլայ մեր՝ գիւղացիներուս վիճակը, մենք ալ չենք գիտեր։ Աչքերնիս անկեր և քննիչներուն, բարեկարգիչներուն կը սպասենք, թէ մի գուցէ անոնց ներկայութիւնը քիչ մը ազդէ այս անսիրտ պաշտօնեաներու և ընդհանուր ըժիմին վրայ, իսկ անոնք ալ անձնական գործերով եւ կերթան։

Վարդգսկցին

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Ղազվին, 5 յունիսի

Պարիզի յայտնի մագազիններ «Լուվր», «Բոն-Մարշէ», «Պիկմարիօն» ունեն իրանց յատուկ ամսագիրները, ուր, բացի իրանց ապրանքների ըէկլամներից, տալիս են նաև բազմաթիւ զուռնագեղ պատկերներ՝ նորանոր մօդային հագուստներով։

Պարսկաստանի մօդային ժուրնալները այժմ ներկայացնում են ժանդարմէրիան և ոստիկանութիւնը։ Ամեն օր մի նոր հագուստ, մի նոր ձև, մի նոր գլխարկ, մի նոր գօտի, մի նոր սռնապան։ Պարսկաստանի կանանը մեռած քաղաքներում ժողովրդի համար այդ էլ մի զուարճութիւն է, չնայած... Դեռ սկիզբներում ժանդարմներին անգլիական կապաներ ծածկեցին, բայց երբ մօլլաները մի փոքր խլրտում առաջացրին, անգլիանը փոխվեց թաղիքից շինած կապայի, յետոյ փոխվեց քօլօզի, յետոյ փափախի և անվերջ։ Այդպէս էլ հագուստները, կօշիկները, սռնապանները։ Արտաքինի էվոլիւցիան չափազանց արագ է կատարվում։

Այժմ էլ ոստիկանութեանն է հերթը։ Նորից 300 շվէդացիներ են հրաւիրված ոստիկանութիւնը վերակազմելու։ Արտաքին նշանները հրաշալի են։ Ահա փողոցի ծայրում կանգնած է նորընծայ ոստիկանը, շիկ հագնված, խրոխտ հայեացքով հպարտհպարտ նայում է ժողովրդին, կոզբից քարշ արած՝ նախկին նիզակի փոխարէն ուսերից շինած մի ձող։ Մարդու թւում է, թէ գտնվում է Եւրոպայի կուլտուրական երկիրներից մէկում։ Սակայն, ոստիկանի կամ ժողովրդի ուղեղն ու կեանքը համապատասխան էվոլիւցիային ենթարկվելու են եաթաղանի և ուսերի համեմատութեամբ—այդ ոչ ոքի հոգը չի, միայն թէ՝ արտաքինը լինի ակնախտիղ և փայլուն։ Տգէտ, գռեհիկ ամբոխը, ինչպէս և համբակ ու թեթեւսոլիկ երիտասարդութիւնը արտաքին փայլումից շլացած յագուրդ է տալիս իր շօլէն տենչերին և մառախլապատ ուղեղի մտորումներին, առանց գիտակցելու որ այդ փայլուն կոճակները, ուսերները բերված են ոչ թէ թշուառ ժողովրդի մէջքի հարուածները քնքշացնելու, մեղմելու, այլ հարուր-հազարների և միլիոնների մի խոշոր և ծանր գումար կազմելով դրվելու նոյն թշուառ ժողովրդի մէջքին, որի բերան տակ նա ծիւրվելով այնպիսի վէրքեր կը ստանայ իր ողնաշարին, որպիսի վէրքեր չէին կարող առաջացնել նախկին զազան ֆէլրաշների հաստակոլուխ մահակների հարուածներն իսկ...

* * *

Ամեն օր նորանոր յայտարարութիւններ են փակցվում պատերին կառավարութեան կողմից և նորանոր ցուցումներ, հրահանգներ և խորհուրդներ տրվում ժողովրդին՝ մէջլիսի պատգամաւորների ընտրութեան վերաբերեալ։ Ղազվինումն էլ արդէն կազմվել է «Անջումանը Նըզարաթ» (ընտրողական բիւրո) և հրաւիրում է ժողովրդին՝ 20 տարեկանից բարձր տղամարդկանց, որոնք շարունակաբար վեց ամիս ապրել են այս քաղաքում, պիտակն կամ զինուորական պաշտօնեայ չեն, քրէական յանցանքի մէջ չեն եղել և դատապարտվել, գնալ և իրանց քուէն տալ մէջլիսի անդամի ընտրութեան։ Ընտրվող կարող է լինել իւրաքանչիւր պարսկահպատակ՝ 24-ից մինչև 70 տարեկան հասակը, եթէ տիրապետում է պարսկական լեզուին։ Ընտրողական այս բոլոր ցերեմոնիաները շատ գեղեցիկ են կազմակերպված, արտաքին ամեն ինչ՝ զուտ ժողովրդական-դեմոկրատական բնաւորութիւն ունի, բայց մենք խորին կերպով համոզված ենք, որ մէջլիսը կը բաղկանայ միմիայն կալուածատէր ֆէոդալներից և մօլլաներից։ Մի քանի օր ևս՝ և ամեն ինչ կը պարզվի...

Մար

II

Ուրմի, 6 յունիսի

Քանի մօտենում են թաղադրութեան օրերը, ներքին ինտրիգներն ու քաշքշոցները այնքան լարված չափերի են հասնում։ Քայքայված Իրանը փորձում է իր ոյժերը հաւաքել և անջատ մասերը միացնել, բայց պառակտման ոգին այնպիսի դեր է խաղացել, որ այլևս անկարելի է ի մի ձուլել Պարսկաստանը։ Թէհրանը ինչքան էլ ճիգ գործ դնի, չէ կարող Ատրպատականի հրամանատար Շուջա-ուդ-Դովլէին իրան ենթարկել և Հիւսիսային Պարսկաստանը միացնել կենտրոնի հետ։ Այդ ասում են կենդանի փաստերը, որ օրէ-օրը թուլացնում է են կենտրոնամէտ ոյժերը։ Շուջա-ուդ-Դովլէն ցանկանում է մի անգամ ընդ միշտ անջատել և անկախ յայտարարել Ատրպատականը շնորհիւ ռուսների։ Այդպիսի մի քայլ աջողվելու համար ինքն ըստ ինքեան ստեղծվում է անհանգիստ ու խառն դրութիւն, որից տուժողը միշտ հասարակ ժողովուրդն է եղել։ Քաշիմ, քաշես, քաշէ,—ահա Պարսկաստանի ներկայ դրութիւնը։ Մօտակայ թաղադրութիւնը ճակատագրական ընկերակցութիւնների մի յուսահատ ճիգ է, որ գործադրելու է Ցաղկերանների հայրենիքը։ Բայց աւաղ, անզօր են այլևս բոլոր մէջոցները՝ ստեղծելու համար այն «երջանիկ» ու «հզօր» Պարսկաստանը, ուր քրիստոնեան երբեմն իրաւունք չունէր իրան մարդ, Աստուծոյ ծառայ համարելու. ուր քրիստոնեան չէր համարձակվում արևը մայր մըտնելուց յետոյ դռնից դուրս գալու, այլապէս կը յօշոտվէր այդ մարդ-գազաններից։

Անագորոյն նախճիրների ու ահեղ ոճիրների ծանրութեան տակ անքացող Պարսկաստանը անդամալոյծ գեղումների մէջ է այսօր, նա այլևս չէ կարող փրկվել։ Նոյն իսկ եթէ փորձ անէ ազատվելու, արթուն հսկող անդունների սուր-սուր կատուները կիջնեն նրա աչքին, ուղեղին, սրտին...

Քաղաքակրթութեան, լուսաւորութեան, մաքրութեան, առողջութեան և այլն և այլն ֆակտորների վրա պարսիկները նայում են իրանց նախկին կրօնամոլ և կաշկանդված ոգով. դեռ աւելին կասեմ. նրանք այդ բոլորը իրանց ամենավատանդաւոր թշնամիներն են համարում։ Ահա այդ կոլատարեր երևոյթների արդիւնք են նաև մէջլիսի ձախողութիւններն ու անաջող ընտրութիւնները։ Սէյիդը, Մահմէդի յաջորդը, բուռն եռանդով քարոզում է ամբոխին, որ ըստ իրանց Ղուրանի քրիստոնեայի մարմինն էլ, խօսքն էլ «մուրտար, հարամ» է, նրան քուէ չը պիտի տալ։ Բոլոր նորամուծութիւնները գալիս են պղծելու «մեր սուրբ հաւատքն ու դուրանը»։ Տգէտ, խաւարամիտ ժողովուրդը հետևում է ոչխարի նման։ Ի՞նչ մէջլիս, ի՞նչ ընտրութիւն. այդ նոյն բանը կը լինի, ինչ որ մարգարիտը խոզերի առաջ։

Հ. Ժամկոչ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Բերլինում ստացված տեղեկութիւններից երևում է, որ Թիւրքիան պատրաստվում է անպատճառ պատերազմել Յունաստանի դէմ։

— Սարաէվում աւստրիական իշխանութիւնները ձերբակալել են հարիւրաւոր սերբերի, որոնց յանձնելու են զինուորական դատարանին։ Ազգաբնակութիւնը ահաբեկված է և փախչում է։

— Իտալիան լրագիրների ասելով Հաբէշստանի երիտասարդ նէգուսը ժողովվել է աւելի քան 150,000 զէնք կրողների և մտադիր է պատերազմել իտալացիների դէմ։ Նոյն լրագիրների ասելով, վերջերս Աւստրիան թնդանօթներ տուեց նէգուսին։

— Լուրերի համաձայն, չինական կառավարութեան և Ռուսաստանի միջև բանակցութիւններ են վարվում մօնղոլական աւտօնոմիան սահմանափակելու մասին։

— Անդլիացի լորդերի կանայք կարիւնէին խնդրագիր են ներկայացրել՝ թէ անհրաժեշտ է նը խիստ օրէնք մշակել պոռնկութեան դէմ։ Մինչև օրս օրէնքը թոյլ է տալիս պոռնկութիւն բոլոր 16 տարեկան աղջիկներին։ Մտադրութիւն կայ հասակը դարձնել 18 տարեկան։

— «Matin»-ի տեղեկութիւնների համաձայն, 1913 թ. Ֆրանսիայում որդեծնութիւնը մահացութիւնից աւելի էր 41,901-ով, մինչդեռ Գերմանիայում ազգաբնակութիւնը աւելացել է 839,887 մարդով։ Գերմանիայում ազգաբնակութեան թիւը աւելանում է մի ժամում 100 հոգի։

— Ֆրանսիացի գրողների ընկերութիւնը յունիսի 14-ին ոտնեց իր ունդամ բանաստեղծ Ֆէրտիօյի ծննդեան 100-ամեակը։

— Գերմանիան թնդանօթներ ուղարկեց Դուրացցօյի պաշտպանութեան համար։

— Հռոմի թիւրքաց դեսպան Նաբիբէյը հեռագրով բուռն բողոք է յայտնում Բ. Դրանը պատերազմի դէմ, կարուկ կերպով պնդելով թէ՝ երբեակ զինակցութիւնը մտադիր է օգտվել Բ. Դրան դժուարութիւններից, աւելի ու աւելի թիւրքիայում ռեակցիան նուաճումներ անելու նպատակով։

— Ֆրանսիական ներքին ծառայութիւնը 800 մլ. ֆրանկի փոխառութիւնը ծածկվեց 15 անգամ։

— Վիէննայում երկիւղ են կրում Ֆրանց-Յովսէփ կայսրի առողջութեան համար։ Կայսրը խիստ ճնշված դրութեան մէջ է։

— Պարիզում երկիւղ են կրում, որ Ֆրանց-Ֆէրդինանդի սպանութիւնը սերբի ձեռքով կատարված լինելու պատճառով, Աւստրիայում նոր հալածանքներ կը սկսվեն պաւօնական ցեղերի դէմ, և այդ բանի հետևանքը այն կը լինի, որ Սերբիան կը միանայ Ռուսաստանին և նոր բարդութիւններ կառաջանան։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՈՅԺ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿԵՆՍՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

Երևան կը գայ Ձեզ մօտ՝ եթէ գործածէք ԲԻՕՄԱԼՑ։ Եղբ. Պատերման Տէլտօվ Բիօմալցը, Բերլինում, համեղ և անուշահոտ էկստրակտ է պատրաստված սօլօդից։ Նա պարունակում է մալթօզա, դիաստազ, ֆոսֆոր, երկաթ և կիր։

ԲԻՕՄԱԼՑԸ ՎԵՐԱԾՆՈՒՄ Է ԿԵԱՆՔԸ

Նա աւելի քան անդարար է մսից և ձուից, և համեղ է աւելի քան կակաօն։ Դեղատն. և դեղավաճառ. արկղիկը 85 կ. և 1 ր. 50 կ.։ Գրականութիւնը ուղարկ. է «Աւտօսիլ» Ընկ.-ը Բերլինում և Վիէնայում. Ուշադրութիւն դարձրէք ֆաբրիկային դրոշմի վրա—«ԵՐԿՈՒ ԹԶՈՒԿ»։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկկա, Զօրօնցօվի արձանի հանդէպ)

Սմեն or, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան վենէրական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երիխայոց հիւանդութ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՅԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երիխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրական վերաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երիխայոց ներքին և հիւ. և ծառայահատ.։
Ե. Ե. ՅԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. երկուշ. չորեքշ. ուրբաթ. ներքին և երիխայոց հիւ. և ծառայահատ։
ԿԻՆ-ԲԺՇԿ ՅԷՐ-ԳԱՐԵԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձուհին և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Ե. Ե. ՅԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Հրաւէրները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—56

ԱՌՈՂՋ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ



մարդը մեր ժամանակի՝ իր այդօրինակ կենսական անհրաժեշտ յատկութիւնների համար ամենից առաջ պարտական է իր մարմնի վերաբերմամբ կանոնաւոր հոգ տանելուն։ Մաքրութիւնը այդ դէպքում առաջին դերն է խաղում։ Երբ խոլերան, տիֆը, ծաղիկը, սիֆիլիսը և այլն համաճարակի ընոյթ են ստանում, խիստ մաքրութիւնը այդ ժամանակ ներկայանում է ամենաւաւ նախազգուշական միջոց վարակման դէմ. լուացվելու և լողանալու ժամանակ, առանձնապէս՝ ուտելուց առաջ ձեռքերը պատահանելու համար, պիտի գործածել

ԿԱՐԲՈԼԵԱՆ ՍԱՊՕՆ № 4711 (գործադրութեան ցուցումը ռուսերէն և գերմաներէն)—կտորը 10 կոպ.։ Իսկականը միայն օրէնքով հաստատված՝ № 4711։ № 4711 կարբոլեան սապօնը պարաստում է գիտական հիմունքների համաձայն՝ ազնիւ տեսակի ինգրիէնտներից և մասնագէտ ֆարմացեվտի մշտական հսկողութեան տակ։ Նոյնպէս և առաջարկում ենք՝ №4711 ԴԷԳՏԵԱՐ ՍԱՊՕՆ №4711 ՍՈՒԼՖԻՄ. ՍԱՊՕՆ Ծախվում է բոլոր դեղավաճառ ու պարֆիւմերային խանութներում։

Միակ գործարանատէր
Ֆերդ. Միւլգենս
Կեօլն Բ./Ռ. Ռիգա

№4711. ԿԱՐԲՈԼԵԱՆ ՍԱՊՕՆ

(Մ. 164487) 10—9

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)
ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Սարագ գնացքը № 6—12 ժ. 8 ր. ցեր., հասնում է Ղարսաֆա 2 ժ. 11 ր., Դանձակ 4 ժ. 23 ր., Եւլախ 5 ժ. 43 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 56 ր. եր., Բաքու 11 ժ. 50 ր. գիշ.։ Պօստսաար գնացքը № 4—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Ղարսաֆա 1 ժ. 1 ր. գիշ., Դանձակ 4 ժ. 7 ր. առ., Եւլախ 6 ժ. 56 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 40 ր. առ., Բաքու 3 ժ. 22 ր. ցեր.։ Մարդասար գնացքը № 8—6 ժ. 25 ր. եր., հասնում է Ղարսաֆա 8 ժ. 49 ր. եր., Դանձակ 11 ժ. 22 ր. գիշ., Եւլախ 1 ժ. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բաքու 7 ժ. 58 ր. առ.։ Մարդասար գնացքը № 12—4 ժ. 5 ր. ցեր., հասնում է Ղարսաֆա 6 ժ. 48 ր. եր., Դանձակ 9 ժ. 32 ր., Եւլախ 11 ժ. 17 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 33 ր., Բաքու 7 ժ. 25 ր. առ.։ Խառն գնացքը № 22—4 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարսաֆա 9 ժ. 46 ր. առ., Դանձակ 2 ժ. 15 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 58 ր. ցեր.։ Հաջի-Կաբուլ 11 ժ. 34 ր. գիշ., Բաքու 5 ժ. 4 ր. առ..

ԲԱԹՈՒՄ.—Պօստսաար գնացքը № 3—9 ժ. 54 ր. առ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 59 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 7—2 ժամ 18 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվո 5 ժ. 35 ր. եր., Բաթում 12 ժ. 48 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 9—8 ժ. 53 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 4 ր. գիշ., Բաթում 10 ժ. 1 ր. առ.։ Խառն գնացքը № 21 (մարգասարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 59 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 9 ժ. 3 ր. առաւ., Բաթում 10 ժ. 10 ր. գիշ.։ Սարագ գնացքը № 5—8 ժ. 16 ր. եր., հասնում է Միխայլօվո 11 ժ. 15 ր. գիշ., Բաթում 6 ժ. 33 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօստսաար գնացքը № 4/3—12 ժ. 56 ր. ցեր., հասնում է Ղարսքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 53 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 11 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 38 ր. ցեր.։ Խառն գնացքը № 24/25 (IV կարգի վագոններով)—10 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարսքիլիսա 9 ժ. 20 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 4 ժ. 18 ր. առ., Սարգեղ 10 ժ. 8 ր. ցեր., Ուլուխանլու 1 ժ. 18 ր. ցեր., Նախիջևան 8 ժ. 18 ր. եր., Ջուլֆա 10 ժ. 13 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 17/18—6 ժ. 58 ր. եր., հասնում է Ղարսքիլիսա 1 ժ. 57 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 5 ժ. 19 ր., Էջմիածին 10 ժ. 21 ր., Ուլուխանլու 10 ժ. 49 ր., Երևան 11 ժ. 42 ր. առ.։ Մարդասար գնացքը № 14|13—11ժ. 13 ր. գիշ., հասնում է Ղարսքիլիսա 6 ժ. 14 ր. առ., Ալէքսանդրօպոլ 9 ժ. 41 ր. ցեր., Կարս 1 ժ. 8 ր. ցեր.։

ԲՈՐԺՕՄԻ.—Մարդասար գնացքը № 17/18—7 ժ. 28 ր. առ., հասնում է Դօրի 10 ժ. 5 ր. առ., Բօրժօմ 12 ժ. 48 ր. ցեր.։ Մարդասար № 19/20—3 ժ. 20 ր. ցեր., հասնում է Դօրի 5 ժ. 51 ր. ցեր., Բօրժօմ 8 ժ. 26 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Սարագ գնացքը № 5—7 ժ. 41 ր. եր. Պօստսաար գնացքը № 3—8 ժ. 58 ր. առ.։ Մարդասար գնացքը № 7—1 ժ. 42 ր. ցեր.։ Խառն գնացքը № 21—2 ժ. 17 ր. գիշերվայ։ Մարդասար գնացքը № 11—10 ժ. 5 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Պօստսաար գնացքը № 4—9 ժ. 30 ր. երեկ.։ Մարդասար գնացքը № 8—5 ժ. 55 ր. ցեր.։ Մարդասար գնացքը № 10—9 ժ. 51 ր. առ.։ Խառն գնացքը № 22—3 ժ. 55 ր. գիշ.։ Սարագ գնացքը № 6—11 ժ. 8 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօստսաար գնացքը № 4Д./3—7 ժ. 21 ր. եր.։ Խառն գնացքը № 26/27 (IV կարգի վագոններով)—4 ժ. 41 ր. ցեր.։ Մարդասար գնացքը № 18/17—8 ժ. 28 ր. առ.։ Մարդասար (Կարսից) գնացքը № 16|15—6 ժ. 58 ր. առ.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—Մարդասար գնացքը № 17/18—10 ժ. 28 ր. եր.։ Մարդասար գնացքը № 19/20—7 ժ 25 ր. առ.։

ԲԺԻՇԿ

Ե. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Յունիսի 1-ից ընդունում է հիւանդներին ԱՌԱՄԹՈՒՄԱՆՈՒՄ։ Էլեքտրաբուժական կաբինէտ։ Բժշկութեան ֆիզիկական մեթոդներ։

(Ե. ու. կ.) 400. 100—23

Կոկանդի հայոց միդտաեան դպրոցի համար հարկաւոր է՝

1) ՄԻ ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ,

որ աւանդելու է շաբաթական 18 դասս, և լինելու է խիստ պատկառելի բարի Վարձատրութիւն աւագութեան և դասատուութեան համար տարեկան 800 ռուբլի, խմբապետութեան համար 100 ռուբ. և ճանապարհածախք 50 ռուբլի։ Պահանջվում է մի քանի տարվայ փորձառութիւն։

2) ՄԻ ՅՈՎՆԱՆԵԱՆԱՒԱՐՏ ՎԱՐԺՈՒՀԻ,

փորձաւոր, շաբաթական 26 դասս տալով, տարեկան 600 ռուբլի և ճանապարհածախք 50 ռուբլի։ Դիմել Հոգաբարձութեան հետևեալ հասցէով. Кокандъ. Арташесу Ваціянцу, և կամ դիմել Ուսուցչական Բիւրոյին։

(օ. մ.) 612. 3—2

Մեծ-Ղարաքիլիսայի հայոց դպրոցի համար հարկաւոր է

ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ,

որը պէտք է ունենայ գոնէ մի քանի տարվայ փորձառութիւն, շաբաթական 16 դասով. (հայոց լեզու, ընդհանուր պատմութիւն)։ Ռոճիկ տարեկան 800 ր.։ Ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Сед. Больш. Караклисъ. Попечительству армянскаго приходскаго училища.

(օ. մ.) 611. 5—2

ԻԻՐԻԷՎԻ մասնաւոր համալսարանական կուրսեր

Բարձրագոյն դպրոց, բաղկացած երկու ֆակուլտէտից՝ բժշկական և բնագիտա-պատմական։ Բացված է աշնանային սեմեստրի խնդիրների ընդունելութիւնը I—V կուրսերը բժշկ. ֆակուլ.։ Վճարը՝ I—III կուրսերի համար 75 ր., IV և V կուրսերի համար 100 ր. իւրաքանչիւր սեմեստրը։ Կուրսերի Խորհրդի կողմից մէջնորդութիւն է յարուցված 1914 թ. բացելու բնագիտա-պատմ. ֆակուլտ. բնագիտա-մանկավարժական բաժանմունքով՝ պատրաստելու մէջն. դպրոցների համար շէյարտագր. և բնագիտութեան դասատուներ երկու սեռից։ (Մանրամասն տեղեկ. ուղարկում է կուրսերի դիւանատունը)։ Բացված է ընդունելութիւնը I կուրսը մտնելու համար, իւրաքանչիւր սեմեստրը 60 ր. վճարով։ Ընդունվում են երկսեռ անձեր։ Մանրամասն տեղեկ. ընդունել. պայմանների և կուրսերի իրաւունքների մասին ուղարկում է կուրսերի դիւանատունը։ Խնդիրները պէտք է ուղղել կուրսերի վերատեսչի անունով. Юрьевъ, Лифл. губ., Промышленная ул. (П. 73817) 4—3

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրթանէս, I և II հատորներ	1 ր. 50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼԲՈՒՄ, Հ. Առաքելեանի	40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մելիքեանի	40 կ.
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ	15 կ.
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի	50 կ.
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ր.
8) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	40 կ.
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Սա. Մալխասեանցի	40 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	35 կ.
11) ՃՈՐՏԵՐԻ ԱՁԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՑԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	15 կ.
12) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ Մ.-ի	15 կ.
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	30 կ.
14) ԳԱԼԻԼԷՕՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	25 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի	80 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր. 50 կ.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԵԼԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Աբթիւր Միւլէրի, Թարգմ. Իս. Յարութիւնեանի.	40 կ.
18) ՓԱՐԱՒՕՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եղեկեանի.	15 կ.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.	20 կ.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արա. Շեհանի	20 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արա. Շեհանի	25 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը եղի միայն 25%։

(6) 10—9

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный